ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

3 (82)

ԵՐԵՎԱՆ

2017

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 3 (82), 2017

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տ.գ.դ.

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Վահագն Ագլյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Վահրամ Հովյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 3 (82), 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դավիդ Սարկիսյան
Ապրիլյան քառօրյա պատերազմը և աղետների տեսությունը 4

Ռոման Կարապետյան
Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցությունը
և Հայաստանի անվտանգության հիմնախնդիրները 12

Սուրեն Սարգսյան
«Ազատության աջակցության ակտ»-ը,
907-րդ բանաձևը և դրա խախտումն Ադրբեջանի կողմից 21

Սամվել Մարտիրոսյան
Ադրբեջանական հաքերները թիրախավորում են հայ օգտատերերին 25

Գագիկ Հարությունյան
Տեղեկատվական գործոնը ԽՍՀՄ փլուզման գործընթացում
և հետխորհրդային զարգացումներում 29

Կարեն Վերանյան
«Ուղեղների արտահոսք» հասկացության շուրջ 37

Վահրամ Հովյան
Տարածաշրջանային գործընթացները և
Մերձավոր ու Միջին Արևելքի հայ համայնքները 47

Հուշագիր հեղինակին 53

ԱՊՐԻԼՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Դավիդ Սարկիսյան[*]

Սույն հոդվածի շրջանակներում կվերլուծենք ապրիլյան քառօրյա պատերազմը շահույթի մաքսիմիզացիայի (*максимизация выигрыша*) և աղետների տեսության լույսի ներքո:

Աղետների տեսության առանցքային դրույթն այն է, որ դիտարկվող համակարգը՝ կախյալ փոփոխականը (գործոնը) և դրա վրա ազդող անկախ փոփոխականները, կարող է դրսևորել երկու տեսակի դինամիկա՝ դանդաղ և արագ: Մինչդեռ անկախ փոփոխականները դրսևորում են դանդաղ դինամիկա, այսինքն՝ տեղի են ունենում սահուն փոփոխություններ, որոշակի կրիտիկական կետում կախյալ փոփոխականն արձանագրում է կտրուկ փոփոխություն՝ համակարգի հավասարակշռությունը վերականգնելու նպատակով:

Եթե շահութային ֆունկցիան ընտրենք որպես կախյալ փոփոխական, դրա կտրուկ փոփոխությունը կարտահայտվի շահույթից բխող ընտրված ռազմավարության արագ օպտիմիզացիայի տեսքով: Մեր կարծիքով՝ հենց այս մեխանիզմն էր ընկած ապրիլյան պատերազմի սանձազերծման հիմքում:

Հաջորդող վերլուծության մեջ շփման գծի երկայնքով բախումների ուժգնության աստիճանն ընտրված է որպես կախյալ փոփոխական: Չնայած տարիներ շարունակ տեղ էին գտնում միայն սահուն փոփոխություններ, 2016թ. ապրիլին տեղի ունեցավ «ցատկ», որի միջոցով աղետների տեսության համաձայն՝ իրականացավ համակարգի վերահարմարեցում: Դրա պատճառն էին անկախ փոփոխականների սահուն փոփոխությունը-

[*] «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ասպիրանտ:

ները, որոնք հասան որոշակի կրիտիկական կետի: Սույն հոդվածում բախումների ուժգնությունն ընկալվում է որպես նախաձեռնող կողմի ռացիոնալ ընտրված ռազմավարության արդյունք, որն ուղղակիորեն արտացոլում է խաղացողի շահութային ֆունկցիան: Հնարավոր ռազմավարությունների բազմությունը ներառում է հրադադարի ռեժիմի բացարձակ պահպանությունից մինչև ողջ ռազմական ներուժի կիրառմամբ պատերազմի սանձազերծումն ընկած տարբերակները:

Հիմնվելով միջազգային հարաբերություններում շահույթի ռացիոնալ մաքսիմիզացիայի ենթադրության վրա՝ բախման որոշակի ուժգնության ընտրությունը պայմանավորված է նախաձեռնողի շահույթի ֆունկցիայով:

Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության՝ ալիևյան ռեժիմի տեսանկյունից որոշակի տարածքների նվաճմանը նպատակաուղղված կարճատև պատերազմի դեպքում շահութային ֆունկցիան ենթադրաբար ունի հետևյալ տեսքը.

$$U_w = Pr(V)\,V + D_w - C_w \qquad (1),$$

որտեղ U_w-ն վերոնշյալ շահույթն է, Pr(V)՝ հաղթանակի և որոշակի տարածքի նվաճման հավանականությունը, V-ն հաղթանակի ռազմավարական արժեքն է, D_w-ն՝ պատերազմի շնորհիվ ավելացած ներքին աջակցությունը, իսկ C_w-ն՝ Ադրբեջանի՝ պատերազմից ակնկալվող վնասը՝ մարդկային կորուստների և նյութական վնասի տեսքով:

Մյուս կողմից՝ որոշակի n ուժգնության մարտերի պահպանման դեպքում (առանց տարածքային նվաճմանն ուղղված պատերազմի) շահույթը կլինի.

$$U_n = D_n - C_n \qquad (2),$$

որտեղ D_n-ն այդ n մակարդակի սահմանային լարվածությանը համապատասխանող ներքին աջակցությունն է ալիևյան ռեժիմին, այսինքն՝ որքանով է արտաքին թշնամու կերպարը և ներքին խնդիրներից ուշադրության շեղումը նպաստում ներքաղաքական դիրքերի ամրապնդմանը: C_n-ն այդ մակարդակին համապատասխանող վնասն է:

Այսպիսով, որոշակի n մակարդակից սահմանային բախումները n+1 մակարդակի բարձրացնելը ռացիոնալ է, եթե.

$U_{n+1} > U_n$ (3)

$D_{n+1} - C_{n+1} > D_n - C_n$ (4)

$D_{n+1} - D_n > C_{n+1} - C_n,$ (5)

Սա նշանակում է, որ եթե ներքին աջակցության աճը գերազանցի գնահատվող վնասի աճը, ապա տեղի կունենա անցում ավելի ցածր լարվածության մակարդակից բարձրի: Միևնույն ժամանակ, ալիևյան ռեժիմի կողմից կարճատև պատերազմ սանձազերծելու ռացիոնալության պայմանը հետևյալն է.

$U_w > U_n$ (6)

$Pr(V)\ V + D_w - C_w > D_n - C_n$ (7)

$Pr(V)\ V + D_w - D_n > C_w - C_n$ (8)

Աղետների տեսության համաձայն, եթե (8) անհավասարման պայմանն ինչ-որ պահի բավարարված չէր, ապա այն պահին, երբ պայմանը բավարարվի, տեղի կունենա կախյալ փոփոխականի կտրուկ «ցատկ՝ արտահայտված պատերազմի սանձազերծման տեսքով: Այսպիսով, մենք այսուհետ կկենտրոնանանք (8) անհավասարման մեջ ներառված փոփոխականների քննարկման վրա ըստ հերթականության:

Ռազմական գործոններ

Առաջին փոփոխականը՝ Ադրբեջանի հաղթանակի հավանականությունը, այլ գործոնների հետ մեկտեղ, կախված է ադրբեջանական և հայկական ուժերի հարաբերակցությունից: Որքան մեծ է ներուժների հարաբերակցությունն Ադրբեջանի օգտին, այդքան մեծ է կարճատև պատերազմում հաղթելու հավանականությունը: Ռազմական բյուջեները կարող են ընտրվել որպես ներուժի պրոքսի փոփոխականներ: ՀՀ և ԱՀ ռազմական բյուջեների դինամիկան պատկերված է *Գծապատկեր 1*-ում[1]:

[1] SIPRI, 2016. *Military Expenditure Database.* https://www.sipri.org/databases/milex, հասանելի է առ հոկտեմբերի 20, 2016թ.:

Գծապատկեր 1

ՀՀ և ԱՀ ռազմական բյուջեները (մլն ԱՄԴ)



Ռացիոնալ դերակատարը, ակնկալելով ռազմական ներուժի հարաբերակցության աճ իր օգտին, կսպասի, մինչև այդ հարաբերակցությունը և հաղթելու հավանականությունը հասնեն առավելագույնի: Նավթի գնի անկումը ծանր հարված էր Ադրբեջանի տնտեսության համար, ինչը ստիպեց ալիևյան ռեժիմին սահմանափակել ռազմական ծախսերի աճը և նույնիսկ կրճատել դրանք: Հետագա կրճատումներ են նախատեսվում 2017թ.[2], մինչդեռ Հայաստանը հայտարարել է 2017թ. սեփական ռազմական բյուջեն ավելացնելու մասին[3]: Սա նշանակում է, որ Ադրբեջանի ռազմական բյուջեի հարաբերակցությունը հայկականին էլ ավելի է նվազելու: Այսպիսով, այն հասավ առավելագույնի 2015թ. վերջին-2016թ. սկզբին, երբ լավագույն ժամանակն էր հարձակվելու համար:

Ներքաղաքական գործոններ

(8) բանաձևի հաջորդ գործոնը V-ն է, որը մենք ընդունում ենք որպես հաստատուն, քանի որ տարածքի աշխարհագրական-ռազմական նշանակությունը քիչ է փոփոխվում մի քանի տարիների կտրվածքով: Սովո-

[2] Kucera, J., 2016. *Struggling Economy Forces Big Defense Spending Cuts in Azerbaijan.* http://www.eurasianet.org/node/80741, հասանելի է առ դեկտեմբերի 20, 2016թ.:

[3] Armedia, 2016. *Armenia to Increase Its Military Budget in 2017.* http://armedia.am/eng/news/39928/armenia-to-increase-its-military-budget-in-2017.html, հասանելի է առ դեկտեմբերի 20, 2016թ.:

բաբար, նման փոփոխություններն ի հայտ են գալիս երկարատև ժամանակաշրջանի ընթացքում՝ կապված տեխնոլոգիական առաջընթացի և այլ մարդածին կամ բնական գործոնների հետ: Այդ պատճառով հաջորդը դիտարկելու ենք D_w և D_n: Բանաձև (8)-ից հետևում է, որ որքան մեծ է D_w - D_n, այնքան մեծ է պատերազմի հավանականությունը: Սա նշանակում է, որ որքան փոքր է D_n – ը՝ նախապատերազմական n ուժգնության սահմանային բախումների պարագայում ալիևյան ռեժիմի ներքին աջակցությունը, այնքան ավելի հավանական է դառնում կարճատև պատերազմը: Ադրբեջանում D_n–ը պայմանավորող հիմնական գործոններից է նավթի գինը, քանի որ երկրի տնտեսությունը և բնակչության բարեկեցությունը մեծապես կախված են դրանից: Նավթի գնի դինամիկան 2011-2016թթ. պատկերված է *Գծապատկեր 2*-ում:

Գծապատկեր 2[4]

Նավթի գնի դինամիկան 2011-2016թթ.



[4] NASDAQ, 2011-2016. *End of Day Commodity Future Price Quotes for Crude Oil Brent.* http://www.nasdaq.com/markets/crude-oil.aspx, հասանելի է առ հոկտեմբերի 20, 2016թ.:

Նավթի գինը հասավ նվազագույնի 2016թ. սկզբին: Ադրբեջանում սկսվեց բողոքի ցույցերի ալիք, և նկատվեց կենսամակարդակի զգալի անկում: Թեպետ քառօրյա պատերազմը տեղի ունեցավ ապրիլի սկզբին, երբ նավթի գինն արդեն սկսել էր դանդաղ բարձրանալ, կարելի է ենթադրել, որ պատերազմ սանձազերծելու որոշումը կայացվել էր ապրիլի 2-ից առնվազն 1-3 ամիս առաջ (երբ նավթի գինը նվազագույնն էր)՝ համապատասխան ռազմական նախապատրաստություններն իրականացնելու համար:

Պատերազմական և նախապատերազմական վնասը

Վերջին դիտարկվող փոփոխականները պատերազմական և նախապատերազմական վնասն են: Բանաձև (8)-ից երևում է, որ որքան փոքր է անհավասարման աջակողմյան մասը՝ C_w–C_n, այնքան մեծ է պատերազմի վտանգը: Ուստի, պատերազմի հավանականությունն ուղիղ համեմատական է C_n-ին, քանի որ որքան մեծ է վերջինս, այնքան փոքր է C_w–C_n-ը: Այսպիսով, Ադրբեջանի նախապատերազմական վնասի մակարդակը, որը համապատասխանում է նախապատերազմական բախումների ուժգնության աստիճանին, ևս կարող է իր ազդեցությունն ունենալ պատերազմի սանձազերծման վրա: Բանաձև (5)-ից հետևում է, որ Ադրբեջանի ներքին դժգոհության դինամիկան կարող է ուղղորդել նախապատերազմական էսկալացիան և դրա հետ կապված վնասի ավելացումը: Միևնույն ժամանակ, վերջինս ավելացնում է կարճատև պատերազմի սանձազերծման հավանականությունը:

Ապրիլյան պատերազմի նախօրեին Ադրբեջանի «տարեկան» C_n-ը կտրուկ աճել էր: 2013թ. համեմատ 2014թ. և 2015թ. զգալիորեն ավելացել էր ադրբեջանական տարեկան զոհերի թիվը, սահմանային լարվածությունը թևակոխել էր որակապես նոր փուլ՝ խոշոր տրամաչափի զինատեսակների կիրառությամբ: Բացի դրանից, ինչպես հետևում է բանաձև (5)-ից, 2016թ. հունվար-մարտ ամիսներին մարտերի ուժգնությունն ավելանում էր Ադրբեջանում տնտեսական վիճակի վատթարացմանը և ներքին դժգոհությունների աճին զուգահեռ: Այսպիսով, պատերազմի նախօրեին իր նախապատերազմական առավելագույնին էր հասել նաև «ամսական» C_n-ը:

Գծապատկեր 3[5]

Հունվարի 1-ապրիլի 1
տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից
արձակված կրակոցների թվի էսկալացիայի միտումը[6]



Եզրակացություն

Սույն հոդվածի շրջանակներում առանձնացվեցին որոշ պատճառ-գործոններ և վերլուծվեց, թե ինչպես դրանց դանդաղ դինամիկան հանգեցրեց կախյալ փոփոխականի՝ սահմանային մարտերի ուժգնության արագ դինամիկայի: Առանձին պատճառահետևանքային կապերն ինտեգրվեցին աղետների տեսության կոնցեպտուալ շրջանակի միջոցով:

Կարճատև պատերազմի սանձազերծումը պայմանավորված է դիտարկվող փոփոխականների կրիտիկական արժեքներ ընդունելով, որոնք սահմանվում են նախաձեռնող կողմի շահութային ֆունկցիայով: Իր հերթին պատերազմի ավարտը կախված է բանաձև (8)-ում ներկայացված շահույթը ստանալով:

[5] *Սարկիսյան Դ.,* ԼՂ հակամարտության գոտում հրադադարի խախտումների վիճակագրական ակնարկ. 2016թ. հունվար-սեպտեմբեր, «Գլոբուս», N1 (80), էջ 38-44, http://www.noravank.am/upload/pdf/Globus_1_2017.pdf, հասանելի է առ փետրվարի 8, 2017թ.:

[6] Գծապատկերը կառուցված է ըստ ԼՂՀ ՊՆ պաշտոնական տվյալների, http://www.nkrmil.am/news, հասանելի է առ սեպտեմբերի 20, 2016թ.:

Այսպիսով, ապրիլյան պատերազմն ավարտվեց այն բանից հետո, երբ Ադրբեջանում բարձրացավ զգալի «հայրենասիրական» ալիք. երթեր տեղի ունեցան Գանձակում և Բաքվում: Նվաճված 800 հեկտար տարածքը ներկայացվեց որպես մեծ հաղթանակ՝ որոշ չափով ամրապնդելով իշխող վարչակարգի վարկանիշը:

Միևնույն ժամանակ, պատերազմն ավարտվեց այն բանից հետո, երբ հայկական ուժերը հետ վերցրին կորցրած դիրքերը և Ադրբեջանի կողմից նոր տարածքային նվաճումները (V) քիչ հավանական դարձան: Վերջապես, պատերազմի կարճ տևողությունը թույլ չտվեց պատերազմական ծախսերին (C_w) զգալիորեն գերազանցել նախապատերազմական ծախսերը (C_n), ինչով բանաձև (8)-ի աջակողմյան մասը չգերազանցեց ձախակողմյան մասին:

ԹՈՒՐՔԻԱ-ՎՐԱՍՏԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ռոման Կարապետյան[*]

Եռակողմ համագործակցության աշխարհաքաղաքական նախադրյալները. Հարավային Կովկասում անվտանգության հիմնախնդիրների ուսումնասիրումը, մասնավորապես՝ Հայաստանի անվտանգության տեսանկյունից, խիստ արդիական է մեզ համար: Գաղտնիք չէ, որ տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը չի նպաստում այստեղ խաղաղության կայացմանը, իսկ հարևան երկրների ու Հայաստանի միջև առաջացած քաղաքական անդունդն առայժմ լցվելու քիչ հեռանկարներ ունի: Այդ բացն առաջացել է երկար տարիների ընթացքում և շարունակում է նոր ճեղքեր տալ, իսկ մեր խնդիրն է հասկանալ, թե որոնք պետք է լինեն այն գործիքները, որոնց օգնությամբ պետք է փակվեն այդ անցքերը:

Այս մարտահրավերների հաղթահարման ճանապարհին խոչընդոտները բազմաթիվ են: ԽՍՀՄ փլուզումից հետո արտաքին քաղաքական և տնտեսական գործընկերների ընտրության հարցում տարածաշրջանի երկրները ցուցաբերում են տարբերակվող մոտեցումներ: Հարավային Կովկասում առկա խնդիրների, հատկապես Հայաստանի ու Վրաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումների և նրանց փոխհարաբերությունների վերաբերյալ լավագույն ձևակերպումներից մեկը տալիս է Հարավային Կովկասի, հետխորհրդային տարածքի ու Մերձավոր Արևելքի հարցերով ամերիկացի հետազոտող Դենիս Սամուելը. «Հարավային Կովկասում առաջացավ մեծ ճեղք, և Հայաստանն ու Վրաստանը մնացին դրա տարբեր կողմերում: Հայաստանը շրջափակման պայմաններում լավ է գիտակցում Վրաստանի տարանցիկ նշանակությունը, իսկ Վրաստանն էլ, իր տարածքում ունենալով մեծաթիվ հայ համայնք, չի կարող ապահովել ներքին խա-

[*] ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս:

ղաղություն, եթե լինեն լարված հարաբերություններ Հայաստանի հետ: Եվ այս միտումն ակնհայտ երևում է ոչ միայն երկկողմ փոխհարաբերություններում, այլ նաև տարածաշրջանային համագործակցության ծրագրերում երկու երկրների մասնակցության գործընթացում»: Խոսքերի հեղինակն ակնհայտ ակնարկում է, որ թեպետ Հայաստանն ու Վրաստանն ունեն արտաքին քաղաքական կողմնորոշումներում սկզբունքային տարբերություններ, նրանց զսպում և հակակշռում են միմյանցից տնտեսական ու քաղաքական կախվածության որոշ տարրեր:

ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո տարածաշրջանում ամրապնդվելու համար պայքարի հիմնական մասնակիցներից մեկը դարձավ Թուրքիան: 1990-ական թթ. արևմտյան երկրները, հատկապես ԱՄՆ-ը, օգնում էին Թուրքիային Անդրկովկասը Ռուսաստանից «կտրելու» հարցում: Սակայն ավելի ուշ Թուրքիան տարածաշրջանում սկսեց վարել ինքնուրույն քաղաքականություն, որի հիմնական առանցքներից մեկն էլ դարձավ թյուրքախոս Ադրբեջանի հետ հարաբերությունների զարգացումը: Ադրբեջանը Թուրքիայի համար կարևորվում է նաև Միջին Ասիայի թյուրքալեզու երկրների հետ կապվելու տեսանկյունից: Մյուս կողմից էլ, ադրբեջանական նավթն ու գազն իր երկրի տարածքով դեպի Եվրոպա արտահանելով՝ Թուրքիան ձեռք է բերում տնտեսական ու քաղաքական հզոր գործիք: Թյուրքական բարեկամ երկրի հետ կապ հաստատել հնարավոր չէր Իրանի վրայով՝ օբյեկտիվ պատճառներով. Իրանը և Թուրքիան գտնվում են չհայտարարված պայքարի մեջ ինչպես տարածաշրջանում, այնպես էլ մահմեդական աշխարհում հեգեմոնիայի համար: Արցախյան պատերազմով, իսկ հետո արցախյան հիմնախնդրով պայմանավորված՝ առաջացել էր դիվանագիտական վակուում հայ-թուրքական հարաբերություններում, ուստի հետզհետե բացառվում էր նաև Հայաստանի տարբերակը:

Անկարա-Թբիլիսի-Բաքու տնտեսական առանցք. Անկասկած, եռակողմ առանցքը թուրքական նախագիծ է, որն ունի ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական հեռահար նպատակներ: Համագործակցության կայացման գործընթացն ի սկզբանե դրվեց տնտեսական հիմքերի վրա:

Տնտեսական ուղղությունն ընդգրկում էր երկու հիմնական մեխանիզմ՝ էներգետիկ և տրանսպորտային հաղորդակցության ծրագրեր: Առանցքի էներգետիկ բաղադրիչն արդեն կայացած է: Գործում են Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը: Ներկայում ակտիվ քննարկման փուլում է Հարավային գազային միջանցքի կառուցման ծրագիրը: 2017թ. փետրվարի 23-ին Բաքվում կայացավ Հարավային գազային միջանցք նախագծի խորհրդատվական մարմնի 3-րդ նստաշրջանը, որի արդյունքում ստորագրվեց համաձայնագիր միջանցքի կառուցման վերաբերյալ: Նախատեսվում է այս միջանցքով Եվրոպա արտահանել տարեկան 10 մլն մ^2 գազ: Հարավային միջանցքն ընդգրկում է արդեն իսկ առկա Հարավկովկասյան գազամուղը, ինչպես նաև նոր կառուցվելիք Տրանսանատոլիական (*TANAP – Trans-Anatolian Pipeline*) և Տրանսադրիատիկ գազամուղները (*TAP – Trans-Adriatic Pipeline*): Սակայն կարծում ենք, որ այս նախագիծն ավելի շատ Ադրբեջանի «պրեստիժի» քաղաքականության հերթական դրսևորումներից է: Խնդիրն այն է, որ կան բազմաթիվ բացեր այս նախագծում. արդյո՞ք Ադրբեջանի Շահ Դենիզ հանքավայրը, որը դառնալու է այս նախագծի հիմնական սնուցման աղբյուրը, ունի բավարար ռեսուրսներ այն սպասարկելու, արդյո՞ք երկարաժամկետ տեսանկյունից շահավետ է նման նախագծի իրականացումը, եթե այն պահանջում է $40 մլրդ-ի ներդրում: Այս հարցերն առաջանում են նաև այն պատճառով, որ ավելի քան 5 տարի առաջ արդեն սկսվել են նախագծի շուրջ աշխատանքները, սակայն դրանք դեռ մեկնարկային փուլում են (չնայած Ադրբեջանի ղեկավարի հայտարարությամբ՝ աշխատանքները մեծ մասամբ կատարված են): Կարծում ենք, որ այս նախագիծն Ադրբեջանին ավելի շատ անհրաժեշտ է Եվրոպայից քաղաքական դիվիդենդներ ստանալու տեսանկյունից, ինչի մասին հրճվանքով հայտարարում են նաև ադրբեջանցի գործիչները:

Երեք երկրներն ընդգրկող հաջորդ ծրագիրը երկաթուղին է: 1993թ. հուլիսին Անկարայում առաջին անգամ շրջանառության մեջ դրվեց Կարս-Թբիլիսի երկաթգծի կառուցման գաղափարը: 2005թ. մայիսի 25-ին Բաքվում երեք երկրների նախագահների կողմից ստորագրվեց Կարս-Թբիլի-

սի-Բաքու երկաթգծի կառուցման մտադրության վերաբերյալ հուշագիր: Իրականում այս երկաթգիծն անցնում է ոչ թե Թբիլիսիով, այլ Ախալքալաքով, իսկ անվան ընտրությունը կատարվել է դրա տարածաշրջանային նշանակությունը շեշտադրելու համար: Հայաստանն ի սկզբանե առաջարկում էր վերանորոգել և շահագործել Կարս-Գյումրի երկաթգիծը, իսկ այնտեղից արդեն գործում է Գյումրի-Թբիլիսի երկաթուղին: Այս հարցով Թուրքիայի հետ երկխոսության գործում պաշտոնական Երևանը միշտ ակնկալել է Թբիլիսիի աջակցությունը, հատկապես, եթե հաշվի առնենք, որ Կարս-Գյումրի երկաթգիծը սկզբնական շրջանում ներգրավված էր ՏՐԱՍԵԿԱ (*TRACECA-Transport Corridor to Europe-Caucasus-Asia*) ծրագրի հիմնական երկաթուղում: Սակայն հասկանալի է, որ Վրաստանը մտադիր չէ հանուն Հայաստանի շահերի կորցնել քաղաքական և տնտեսական լծակներ ձեռք բերելու իր հնարավորությունը: Մի քանի անգամ հետաձգվելուց հետո, 2016թ. ավարտին, նախատեսվում էր կատարել երկաթգծի բացումը, սակայն մինչ օրս դեռևս կան երկաթգծի որոշ հատվածների անավարտ աշխատանքներ, և բացումը նախատեսվում է 2017թ. գարնանը: Նախատեսվում է դրանով տարեկան 5 մլն տոննա բեռ և 1 մլն մարդ տեղափոխել: Իսկ հետագայում այս ծավալները պետք է եռապատկվեն: Միայն վրացական հատվածի շինարարության վրա արդեն իսկ նախօրոք նախատեսվածից չորս անգամ ավելի մեծ գումար է ծախսվել, որը կազմում է $775 մլն: Վրացական հատվածի ծախսերը կատարվել են Ադրբեջանի տրամադրած վարկային միջոցների հաշվին: Սա ևս մեկ անգամ խոսում է այն մասին, որ Վրաստանն ուղղակի ձևով մխրճվում է ադրբեջանական և թուրքական տնտեսական կախվածության ճահիճ, ինչը ժամանակի ընթացքում ավելի քիչ հնարավորություններ է տալիս վերջինիս դուրս գալ թուրքական տնտեսական ազդեցությունից:

Եռակողմ քաղաքական և ռազմական համագործակցություն. Թուրքիան Վրաստանի և Ադրբեջանի հետ տնտեսական ձևաչափով բավական ամուր հիմքեր ապահովելուց հետո ձեռնամուխ եղավ նաև քաղաքական ու ռազմական համագործակցության վերաբերյալ ծրագրերի մշակմանը: Առաջին ձևաչափը նախատեսում էր համագործակցություն Բաքու-Թբի-

լիսի-Ջեյհան նավթամուղի անվտանգությունը պաշտպանելու նպատակով: Այս գաղափարն առաջին անգամ շրջանառության մեջ դրվեց 1999թ. վերջից և քննարկվեց 2000թ. Տրապիզոնում արտաքին գործերի նախարարների եռակողմ բանակցությունների ժամանակ: Պաշտոնական Թբիլիսին հայտարարում էր, որ այդ նախաձեռնությունը դիտարկում է իրենց արտաքին քաղաքականության սկզբունքային դիրքորոշման՝ ՆԱՏՕ-ի և Եվրոպական միության երկրների հետ բազմակողմ հարաբերությունների և համագործակցության զարգացման ուղեգծում: Իսկ պաշտոնական Երևանի այն մտահոգությանը, թե արդյոք այդ համագործակցությունը չի նպաստի տարածաշրջանում նոր բաժանարար գծերի առաջացմանը, Թբիլիսին պատասխանում է, որ դա ուղղված է ողջ տարածաշրջանում կայունության և անվտանգության ապահովմանը: 2007թ. փետրվարի 27-ին Թբիլիսիում Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի արտգործնախարարները ստորագրեցին Թբիլիսյան հռչակագիրը: Թբիլիսիում հավաքվելու առիթը Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի շինարարության մեկնարկի պայմանագիրն էր: Սակայն կնքված փաստաթուղթը վերաբերում էր տարածաշրջանում երեք երկրների ռազմավարական համագործակցության վերաբերյալ քաղաքական դիրքորոշմանը:

2012թ. հունիսի 8-ին Տրապիզոնում երեք երկրների արտգործնախարարները ստորագրեցին Տրապիզոնի հռչակագիրը, որով նախատեսվում է միջազգային կազմակերպություններում միասնական և միմյանց աջակցելու քաղաքականություն, համագործակցություն Աբխազիայի, Հարավային Օսիայի և արցախյան հիմնախնդիրների կարգավորման հարցում՝ հիմք ընդունելով Ադրբեջանի և Վրաստանի միջազգայնորեն ընդունված սահմանները, խթանել համագործակցության հետագա զարգացումը բոլոր ոլորտներում, հատկապես տնտեսական, շարունակել համատեղ աշխատանքը ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շուրջ, որի արդի փուլը ներառում է Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգիծը, հաստատել Բաքվի միջազգային ծովային առևտրի նոր նավահանգստի կառուցման նախագիծը, որը կդառնա հաջորդ կարևոր կապող օղակը արևելք-արևմուտք տրանսպորտային միջանցքում: Սա եռակողմ առաջին պաշտոնական նման

փաստաթուղթն է, որը ռազմավարական փաստաթղթի համարժեքություն ունի: Տրապիզոնի հռչակագրով, փաստորեն, եռակողմ տնտեսական համագործակցությունը դրվեց նոր հարթակի վրա՝ ամրապնդվելով քաղաքական համագործակցության վերաբերյալ բավական բարձր մակարդակի փաստաթղթով:

Եռակողմ ձևաչափով ռազմական համագործակցությունն առավել ակտիվ փուլ մտավ 2014թ. օգոստոսին պաշտպանության նախարարների մակարդակով Նախիջևանում կայացած հանդիպումից հետո: 2015թ. մայիսի 4-ին Անկարայում երեք երկրների զինված ուժերի ղեկավարների հանդիպման ընթացքում քննարկվել է երկաթուղային գծերի և էներգակիրների մատակարարման ենթակառուցվածքների անվտանգության հարցը: 2015թ. վերջին ռուս-թուրքական հարաբերությունների սրման ֆոնին դեկտեմբերի 17-ին Ստամբուլում կայացավ երեք երկրների պաշտպանության նախարարների հերթական հանդիպումը, որտեղ հիմնական շեշտադրումը դրված էր պաշտպանական անվտանգության և զինված ուժերի արդիականացման հարցերի վրա: 2017թ. փետրվարի 16-ին Բրյուսելում Վրաստանի և Թուրքիայի պաշտպանության նախարարները քննարկել են եռակողմ ռազմական համագործակցության պայմանագրի ստորագրման հարցը: Ընթացիկ տարվա մայիսին նախատեսվում է երեք երկրների ղեկավարների հանդիպում Թբիլիսիում, ուստի հնարավոր է հենց այդ ժամանակ էլ ստորագրվի ռազմական համագործակցության մասին հուշագիր:

Որո՞նք են այլընտրանքները և հնարավոր հեռանկարները Հայաստանի համար. Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցությունը ժամանակի ընթացքում ավելի պարզորոշ երանգներով է ցույց տալիս Հայաստանի դեմ ուղղվածությունը: Վրաստանի ամենախոշոր առևտրային գործընկերը Թուրքիան է, և Վրաստանում օտարերկրյա ամենամեծ ներդրումները թուրքական կապիտալով են: Վրաստանը հսկայական եկամուտներ է ստանում իր տարածքով անցնող էներգետիկ ենթակառուցվածքներից: Սա խոսում է այն մասին, որ մոտ ապագայում էլ Վրաստանի համագործակցությունը հարևան թյուրքական երկրների

հետ շարունակելու է ընդունել նոր ծավալներ: Կարծում ենք, որ սա լուրջ մարտահրավեր է Հայաստանի ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմական ու քաղաքական անվտանգությանը: Պաշտոնական Թբիլիսին բազմիցս հայտարարել է, որ այս համագործակցությունն ուղղված չէ Հայաստանի դեմ: Սակայն կարծում ենք, որ Վրաստանն անուղղակիորեն ներքաշվում է Հայաստանի մեկուսացման մեջ: Որքան էլ Թբիլիսին փորձի պահպանել չեզոքություն հայ-ադրբեջանական հարաբերություններում, Արցախի Հանրապետությունում կամ ՀՀ-Ադրբեջան շփման գծում ռազմական սրացման պայմաններում Վրաստանը կարող է կողմնորոշվել ոչ թե դեպի քրիստոնյա Հայաստանը, այլ դեպի տնտեսական ավելի խոշոր գործընկերները և նպաստել Հայաստանի տնտեսական շրջափակմանը:

Այս համագործակցության ազդեցության թուլացման և այլընտրանքների ճանապարհին նախ անհրաժեշտ է տարածաշրջանային մակարդակով դրան հակազդել Ռուսաստան-Հայաստան-Իրան ձևաչափով համագործակցությամբ: Կարծում ենք, որ Իրանի հետ համագործակցության մեջ անհրաժեշտ է հնարավորինս ներգրավել նաև Վրաստանին՝ դրանով իսկ որոշ չափով նրան «կտրելով» թյուրքական երկրներից: Մանավանդ որ այս ուղղությամբ արդեն որոշակի նախադրյալներ կան՝ ի դեմս Իրան-ՀՀ-Վրաստան եռակողմ և Իրան-ՀՀ-Վրաստան-Ռուսաստան քառակողմ ձևաչափով տնտեսական համագործակցության վերաբերյալ ծրագրերի: Իսկ Վրաստանի հետ բազմակողմ հարթություններում համագործակցության զարգացման համար կարևոր գրավական կարող են դառնալ ռուս-վրացական հարաբերությունների կարգավորումն ու աբխազական երկաթուղու վերագործարկումը: Կարծում ենք, որ այս հարցում Վրաստանում կա դրական զարգացման որոշակի միտում: Նախորդ տարվա խորհրդարանական ընտրություններում վրացական խորհրդարան անցած երրորդ քաղաքական ուժը Վրաստանի հայրենասերների դաշինքն է, որը ոչ պաշտոնապես անվանում են նաև ռուսամետ քաղաքական ուժ: Թեպետ այս որակումը միանշանակ չէ, քանի որ դեռևս նախընտրական քարոզչության ժամանակ այս ուժի ներկայացուցիչները, ովքեր հենվում են հիմնականում հակաթուրքական թեզերի վրա (նրանք մե-

ղադրում են Թուրքիային 1918թ. Վրաստանի տարածքների շուրջ 33%-ի զավթման մեջ, ինչպես նաև վստահ են, որ Թուրքիան ցանկանում է զավթել վրացական Աբխազիան և Աջարիան ևս), մեկ անգամ չէ, որ Ռուսաստանը որակել են որպես օկուպանտ: Մյուս կողմից էլ, վրացական խորհրդարան չանցան հիմնական արևմտամետ «Ազատ դեմոկրատներ» և «Հանրապետական կուսակցություն» քաղաքական ուժերը, որոնք դեռևս 2012 թվականից ղեկավարում էին երկրի պաշտպանական և արտաքին քաղաքական գերատեսչությունները:

Դեռևս նախընտրական շրջանում, 2016թ. սեպտեմբերին, «Վրացական ուժ» ազգայնական կազմակերպության ակտիվիստները հակաթուրքական տրամադրություններով բողոքի ակցիա կազմակերպեցին Թբիլիսիում, որն ուղեկցվեց թուրքերին պատկանող առևտրային և սպասարկման ոլորտի հաստատություններ ներխուժելով և գույքային վնաս հասցնելով: Այս, իսկ հետագայում նաև վրացական խորհրդարանական ընտրությունների արդյունքները խոսում են այն մասին, որ Վրաստանում աստիճանաբար ավելի մեծ ծավալներ են ընդունում հակաթուրքական տրամադրությունները, ինչը բխում է վերջինիս կողմից երկրում իրականացվող տնտեսական էքսպանսիայից: Մյուս կողմից՝ Վրաստանում մեծանում է այն քաղաքական գործիչների թիվը, ովքեր պատրաստ են երկխոսության սեղանի շուրջ նստել Ռուսաստանի հետ: Մեծապես փոխվել է նաև ռուսների նկատմամբ վրացական հասարակական կարծիքը: Ներկայում Վրաստանում չկա այն բացահայտ հակառուսական տրամադրվածությունը, ինչն առաջացել էր 2008թ. հետո: Կարծում ենք, որ այս երկու փաստերը բխում են Հայաստանի շահերից, ավելի է մեծանում ռուս-վրացական հարաբերությունների կարգավորման հնարավորությունը, ուստի և Հայաստան-Վրաստան-Ռուսաստան առանցքով համագործակցության զարգացման հեռանկարը:

Վերջին մի քանի ամիսներին ՀՀ-Վրաստան հարաբերություններում տեղ գտած զարգացումները նույնպես դրական հեռանկարների մասին մտորելու տեղիք են տալիս: 2016թ. դեկտեմբերին երկօրյա պաշտոնական այցով Վրաստան մեկնեց ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սար-

գսյանը, իսկ 2017թ. փետրվարի 23-24-ը երկօրյա պաշտոնական այցով Թբիլիսիում եղավ ՀՀ վարչապետը: Կարեն Կարապետյանի այցը մեծ արձագանք գտավ հայկական ու վրացական քաղաքագիտական հանրույթում: Այցի հիմնական շեշտադրումներն ընկած էին տարանցիկ և էներգետիկ միջանցքի ձևավորման հարցերի վրա: Կարծես թե դրական միտում կա Վրաստանի տարածքով դեպի Ռուսաստան տարանցման ուղիների ամրացման և նոր ուղիների գործարկման հարցով բանակցություններում, ինչի մասին փաստեց նաև ՀՀ վարչապետը: Կարեն Կարապետյանը Վրաստան կատարած այցի վերաբերյալ մամուլի ասուլիսում վստահեցրեց, որ Լարսն այլընտրանք ունենալու է, սակայն չմասնավորեցրեց, թե կոնկրետ ինչ այլընտրանքի մասին է խոսքը. արդյո՞ք դա լինելու է աբխազական երկաթգիծը, ցամաքային այլ երթուղի, թե՞ ծովային ճանապարհը: ՀՀ վարչապետի այս հայտարարությունը բուռն արձագանք առաջացրեց Վրաստանում, որոշ քաղաքագետներ հայտարարեցին, որ անընդունելի է աբխազական երկաթուղու գործարկումը, քանի որ այն կնշանակի Աբխազիայի տնտեսական ինքնության ճանաչում: Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում ևս մեկ անգամ շեշտել, որ տարանցման հարցում բանակցություններում դրական արդյունքները հիմնականում ուղիղ համեմատական են ռուս-վրացական երկխոսության կայացմանը: Մյուս կողմից՝ այս հարցում անհրաժեշտ է մի փոքր մեծացնել ճնշումը Թբիլիսիի վրա, մանավանդ որ նախորդ տարվա խորհրդարանական ընտրություններից հետո Վրաստանում մեծացել են հարավային և հյուսիսային ուղղություններով երկխոսության զարգացման տրամադրությունները:

«ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՏ»-Ը, 907-ՐԴ ԲԱՆԱՁԵՎԸ ԵՎ ԴՐԱ ԽԱԽՏՈՒՄՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Սուրեն Սարգսյան[*]

ԽՍՀՄ փլուզումից հետո՝ 1992-ի օգոստոսին, ԱՄՆ Ներկայացուցիչների պալատն ու Սենատը համատեղ ընդունեցին «Ազատության աջակցության ակտ» օրենքը, որով նախատեսվում էր օժանդակել Ռուսաստանին և նորանկախ մյուս պետություններին՝ ստեղծելու դեմոկրատական կառավարման մոդել և ազատական տնտեսություն: Այդ ակտը (օրենքը) գործողությունների ծավալուն փաթեթ է, որը տարբեր ուղղություններով ճանապարհային քարտեզ է: Ըստ էության, այն գործադիր իշխանության տարբեր մարմինների համար նախատեսված քաղաքական փաստաթուղթ է:

«Ազատության աջակցության ակտ»-ը նախատեսում էր տնտեսության, բիզնեսի, գյուղատնտեսության և այլ ուղղություններով ծավալուն օժանդակություն Ռուսաստանին և նորանկախ բոլոր պետություններին, որոնց ԱՄՆ նախագահը հատուկ ուղերձով ճանաչել և որոնց հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու պատրաստակամություն էր հայտնել 1991թ. դեկտեմբերի 25-ին[1]:

1992թ., հաշվի առնելով Արցախի դեմ հրահրված պատերազմը, հայ համայնքի և լոբբիստների աշխատանքի շնորհիվ «Ազատության աջակցության ակտ»-ի տեքստում նախաձեռնվեց 907-րդ բանաձևը[2] (հոդվածը), որով արգելվեց ԱՄՆ կառավարությանը որևէ աջակցություն ցուցաբերել Ադրբեջանին, քանի դեռ ԱՄՆ նախագահը չի համոզվել, հետևաբար՝ զեկուցել Կոնգրեսին, որ պաշտոնական Բաքուն գործուն քայլեր է ձեռնարկում Հայաստանի ապաշրջափակման համար և ուժ չի կիրառում Հայաս-

[*] ԱՄՆ Թաֆթսի համալսարանի Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցի գիտաշխատող, միջազգայնագետ:

[1] http://www.nytimes.com/1991/12/26/world/end-soviet-union-text-bush-s-address-nation-gorbachev-s-resignation.html

[2] https://www.congress.gov/bill/102nd-congress/senate-bill/2532/text

տանի և Լեռնային Ղարաբաղի դեմ: 907-րդ բանաձևի նախաձեռնողը դեմոկրատ սենատոր Ջոն Քերին[3] էր: Նախագահ Բուշի կողմից օրենքի ստորագրման պահից այն ուժի մեջ մտավ և դարձավ Ադրբեջան-ԱՄՆ հարաբերությունների համար խոչընդոտ՝ ուժի մեջ մնալով շուրջ 10 տարի: Այդ տարիների ընթացքում Ադրբեջանը ԱՊՀ միակ պետությունն էր, որ ԱՄՆ կառավարությունից ուղղակի օժանդակություն չէր կարողանում ստանալ: Բազմաթիվ փորձեր՝ դիվանագիտական խողովակներով, թե լոբբիստների կողմից, իրականացվում էին, սակայն հայ լոբբիստներին հաջողվում էր բանաձևը թողնել ուժի մեջ:

2001-ի սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշ կրտսերը, ազգային անվտանգությանը սպառնացող անմիջական վտանգի առկայության հիմքով, դիմեց Կոնգրեսին՝ հնարավորություն խնդրելով յուրաքանչյուր բյուջետային տարի շրջանցել 907 բանաձևը և ռազմական օգնություն տրամադրել Ադրբեջանին՝ ահաբեկչության դեմ պայքարի, կոալիցիոն հակաահաբեկչական գործողությունների և Ադրբեջանի սահմանային անվտանգությունն ապահովելու համար՝ վստահեցնելով, որ այդ օգնությունը որևէ ձևով չի խանգարելու Ադրբեջան-Հայաստան բանակցային գործընթացին և չի օգտագործվելու Հայաստանի դեմ[4]: Այդ օգնությունը մի շարք կրթական և վերապատրաստման ծրագրեր էր ներկայացնում ԱՄՆ տարբեր ռազմաուսումնական հաստատություններում:

Հետևաբար, ստացվում է, որ ԱՄՆ նախագահը Կոնգրեսին ուղղված իր ամենամյա նամակով հաստատում է, որ 907-րդ բանաձևի շրջանցումը և Ադրբեջանին տրամադրվող օգնությունը չեն կարող օգտագործվել Հայաստանի դեմ (այստեղ տեքստից արդեն իսկ հանված են «Լեռնային Ղարաբաղ» բառերը, որոնք ներառված են 907-րդ բանաձևի հիմնական տեքստում):

Հաշվի առնելով ԱՄՆ ազգային շահերը, ազգային անվտանգությանը սպառնացող անմիջական վտանգը, ինչպես նաև կոալիցիոն գործողություններն Աֆղանստանում և Իրաքում, սեպտեմբերի 11-ին ահաբեկչական գործողություններից հետո ստեղծված իրողությունը՝ հայ հա-

[3] https://www.congress.gov/amendment/102nd-congress/senate-amendment/2686/text
[4] https://georgewbush-whitehouse.archives.gov/news/releases/2002/01/20020128-20.html

մայնքն ու լոբբիստները չէին կարող հակազդել բանաձևի շրջանցմանը, և դա ամեն տարի արվում է՝ նույն սկզբունքով և նույն տեքստով:

2016թ. ապրիլյան ռազմական բախումների ընթացքում, Թալիշի ուղղությամբ Ադրբեջանի իրականացրած հարձակման ժամանակ հայկական զինված ուժերի կողմից ոչնչացվել է ադրբեջանական բանակի երկու բարձրաստիճան սպա, ովքեր Ադրբեջանին տրամադրվող ռազմական օգնության շրջանակներում ուսանել են ԱՄՆ-ում: Մասնավորապես, փոխգնդապետ Մուրադ Միրզաևն ուսանել է Տեխասի նահանգի Սան Անտոնիոյի Ռազմական լեզվաբանական ինստիտուտում և մասնակցել է Վիրջինիայի ռազմածովային ուժերի սպայական հատուկ դասընթացներին: Փոխգնդապետ Վուգար Յուսիֆովը՝ Թալիշում ոչնչացված երկրորդ ադրբեջանցի զինվորականը, ԱՄՆ-ից Ադրբեջանին տրամադրվող ռազմական օգնության շրջանակներում ուսանել է Արիզոնա նահանգի ռազմական հետախուզության կենտրոնում:

Սրանից բխում է, որ ԱՄՆ նախագահը Կոնգրեսին ուղղած իր ամենամյա նամակով հավաստիացնում և հաստատում է մի բան, իսկ Ադրբեջանի իշխանություններն անում են միանգամայն այլ բան: Ստացվում է, որ Ադրբեջանի պատճառով խախտվում է նախ 907-րդ բանաձևը, բացի բանաձևից՝ ԱՄՆ նախագահի նամակ-հիմնավորումը՝ ուղղված Կոնգրեսին, քանի որ, ըստ նամակի բովանդակության, Ադրբեջանին տրամադրվող օգնությունը չի կարող խանգարել Հայաստանի և Ադրբեջանի միջև ընթացող խաղաղ բանակցային գործընթացին:

Այս իրավիճակին հակազդելու համար Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության, պաշտպանության նախարարության, ԱՄՆ հայ համայնքի և հայկական լոբբիստական կազմակերպությունների միահամուռ ջանքերով անհրաժեշտ է հարցը ներկայացնել Սպիտակ տանը, Պետական դեպարտամենտին, Պենտագոնին, ինչպես նաև ԱՄՆ Ներկայացուցիչների պալատին և Սենատին, քանի որ Ադրբեջանի անպատասխանատու գործողությունները ոչ միայն սպառնում են Հայաստանի և Արցախի անվտանգությանը, այլև խախտում են Միացյալ Նահանգների «Ազատության աջակցության ակտ»-ը, 907-րդ բանաձևը, ինչպես նաև ԱՄՆ նախագահի՝ Կոնգրեսին ուղղված նամակի բովանդակությունն ու տրամաբանությունը:

Միաժամանակ, անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ պաշտպանության նախարարությունն ԱՄՆ Պաշտպանության դեպարտամենտին ներկայացնի համապատասխան ապացույցներն առ այն, որ Ադրբեջանի սպաները, ովքեր ոչնչացվել են Թալիշում և Թալիշի խաղաղ բնակչության, մասնավորապես՝ տարեց քաղաքացիների դաժան սպանության պատասխանատուն են, կրթվել և վերապատրաստվել են ԱՄՆ ռազմաուսումնական հաստատություններում և ստացել են համապատասխան դիպլոմներ ու սերտիֆիկատներ:

Բացի վերոնշյալ հանգամանքներից, պետք է հաշվի առնել նաև հետևյալ խնդիրը: 2016թ. հայտնի դարձավ, որ Իսրայելն Ադրբեջանին է վաճառել «Երկաթե գմբեթ» կոչվող հակահրթիռային կայանները: Այս կայաններն ամբողջապես արտադրված են Իսրայելում: Սակայն արտադրության համար կիրառվել են տարբեր տեխնոլոգիաներ, այդ թվում՝ ամերիկյան արտադրության: Եթե մենք հնարավորություն ունենանք վերականգնելու 907-րդ բանաձևի գործողությունը, ապա երրորդ պետությունները, որոնք ամերիկյան արտադրության կամ ամերիկյան տեխնոլոգիաներ պարունակող զինատեսակներ են ձեռք բերում ԱՄՆ-ից, իրավունք չեն ունենա դրանք վաճառել երրորդ պետությանը՝ Ադրբեջանին: Այսինքն, եթե բանաձևն իրավական ուժ ստանա և յուրաքանչյուր տարի ԱՄՆ նախագահը չշրջանցի այն իր նամակով, ամերիկյան զենք արտադրող ընկերությունները զենքի վաճառքի պայմանագրում պարտավոր են լինելու նշել, որ համապատասխան զինատեսակները չեն կարող վերավաճառվել Ադրբեջանին:

Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է հստակ քայլեր ձեռնարկել դիվանագիտություն-հայ համայնք-լոբբիստական աշխատանք ձևաչափով և հարցը բերել հայ-ամերիկյան քաղաքական հարաբերությունների օրակարգ: Սա այն բացառիկ դեպքերից է, երբ Սենատի ու Ներկայացուցիչների պալատի միջոցով կարող ենք ազդեցություն ունենալ Սպիտակ տան վրա: Ինչպես հայտնի է, հայ համայնքը կարողանում է լուրջ աշխատանք իրականացնել օրենսդիր մարմնում, սակայն գործադիրում, մանավանդ՝ հանրապետական վարչակազմի պարագայում, առանձնապես լայն հնարավորություններ չունի: ԱՄՆ Կոնգրեսի՝ Հայաստանին աջակցող խմբի միջոցով հնարավոր է համապատասխան օրինագիծ դնել շրջանառության մեջ և ակտիվ աշխատել այս ուղղությամբ՝ նպատակ ունենալով վերջնականապես դադարեցնել Ադրբեջանին ռազմական օգնության տրամադրումը ԱՄՆ-ի կողմից:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՔԵՐՆԵՐԸ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄ ԵՆ ՀԱՅ ՕԳՏԱՏԵՐԵՐԻՆ

Սամվել Մարտիրոսյան[*]

Գաղտնիք չէ, որ ադրբեջանական հաքերային համայնքի հիմնական թիրախներից են Հայաստանը և հայերը՝ անկախ բնակության վայրից: Հաքերային ամենամեծ ու ակտիվ խմբավորումն անգամ, որն արդեն 5 տարի գործում է, կոչվում է *Anti-Armenia Team*, որն էլ կազմակերպված հակահայկական հաքերային հարձակումների հիմնական պատասխանատուն է: Թեև ասպարեզում պարբերաբար գործում են նաև նրանց հետ համագործակցող թուրքական խմբավորումներ[1]:

Ադրբեջանական հաքերներն աշխատել և աշխատում են հայկական կայքերը «կոտրելու» ուղղությամբ, ինչպես նաև պարբերաբար իրականացնում են DDoS հարձակումներ[2]: Սակայն վերջին տարվա ընթացքում նկատվում է ադրբեջանական հաքերների հարձակումների որակի փոփոխություն: Դեռ ապրիլյան պատերազմական գործողությունների ժամանակ նկատվեց, որ արդեն որպես թիրախ սկսում են հանդիսանալ ոչ միայն կայքերը, ներքին ցանցերը, այլև առանձին հայ օգտատերերը:

Այսօր Հայաստանում ինտերնետ կապից օգտվողների թիվը հասնում է բնակչության մոտ երկու երրորդին: Հիմնական երկու սոցցանցերի օգտատերերի թիվը գերազանցում է մեկ միլիոնը[3]: Եվ հենց հիմնականում սոցցանցերի օգտատերերն են դառնում հարձակումների թիրախ:

Այսպես, 2016թ. հունիսին հայտնաբերվել էր ֆիշինգային[4] փորձ, որն իրականացվում էր Ադրբեջանի տարածքից հայկական էլեկտրոնային փոստից օգտվողների դեմ: Օգտվողները ստանում էին հետևյալ բովանդա-

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

[1] Հայ-ադրբեջանական ապրիլյան պատերազմին ուղեկցող կիբեռհարձակումները, *Սամվել Մարտիրոսյան*, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=14732&sphrase_id=59206

[2] DDoS հարձակումները Հայաստանի վրա դառնում են մտահոգիչ, *Սամվել Մարտիրոսյան,* http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12704

[3] Հայաստանի հասարակությունը և կիբեռանվտանգությունը. իրավիճակը 2016թ., *Սամվել Մարտիրոսյան*, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15344&sphrase_id=59206

[4] Phishing, https://en.wikipedia.org/wiki/Phishing

կությամբ նամակ, որն իբր զգուշացում էր կանոնների խախտման վերաբերյալ և առաջարկ՝ հղումով գնալ և հաստատել սեփական անձը՝ էլեկտրոնային փոստը պահպանելու համար։

Hello example@mail.ru,

We have processed suspension of your email. due to mail violation and policy abuse noticed. Click HERE to confirm ownership and verify example@mail.ru NOTE: Failure to oblige will lead to mail malfunction, loss of files and final Deactivation of mail box. Best Regards, Mail Team ---------- mail sent to: iskakan@mail.ru | (C) 2016 Mail. All rights reserved. NMLSR ID 399801

Հղումը սեղմողը հայտնվում է կեղծված էլեկտրոնային փոստի էջում, ուր իրեն առաջարկվում էր մուտքագրել իր մուտքանունը և գաղտնաբառը (տե՛ս *Նկար 1*)։ Նման գործողություններ կատարողն ինքը փաստացի հանձնում էր գաղտնաբառը հաքերներին։

Նկար 1

Ֆիշինգային էջը, որի միջոցով կորզվում էին էլեկտրոնային փոստերի գաղտնաբառերը

Տվյալ էջի ուսումնասիրությունը թույլ էր տալիս հասկանալ, որ այն ստեղծվել և կառավարվում է Ադրբեջանից (տե՛ս *Նկար 2*).

Նկար 2

Ֆիշինգային էջի կոդը

```
<title>Absheron-sharab Web Mail</title>
<link rel="SHORTCUT ICON" href="http://absheron-sharab.az/favicon.ico">
<link rel="stylesheet" type="text/css" href="./Absheron-sharab Web Mail_files/me.css">

<script type="text/javascript" language="javascript" src="./Absheron-sharab Web Mail_files/LIBCommon.js"></script>
```

2017թ. ադրբեջանցի հաքերները հայտարարեցին, որ իրենց հաջողվել է կոտրել հարյուրավոր հայկական ֆեյսբուքյան օգտատերերի էջեր[5]: Այդ օգտատերերի մուտքանունն ու գաղտնաբառերն էին հրապարակվել: Հետագայում անընդհատ հարձակումները հայկական օգտատերերի դեմ շարունակվում էին:

Այս անգամ նույնպես որպես հարձակման հնարք օգտագործվել էր ֆիշինգը: Հաքերները տարածում էին հողում ֆեյսբուքյան հավելվածի (*application*) վրա, ուր նորից առաջարկվում էր ներմուծել մուտքանունը և գաղտնաբառը (տե՛ս *Նկար 3*).

Նկար 3

Ֆիշինգային հավելված,
որն օգտագործվում էր ադրբեջանցի հաքերների կողմից



Եթե մինչև վերջերս օգտատերերի վրա հարձակումը հիմնականում հոգեբանական ճնշման միջոց էր, ապա վերջին զարգացումները ցույց են տալիս, որ դրանք օգտագործվում են նաև ապատեղեկատվություն տարածելու համար, որպես տեղեկատվական պատերազմի բաղադրիչ: Այս-

[5] Facebook-ի էջերի ցանկ է ներկայացվել. ըստ ադրբեջանցի հաքերների, դրանք կոտրված են, http://newsarmenia.am/am/news/armenia/facebook-i-ejeri-cank-e-nerkayacvel-/

պես, փետրվարի 25-ի ադրբեջանական ձախողված դիվերսիոն գործողությունից հետո կոտրված ֆեյսբուքյան հաշիվներն օգտագործվում էին իբրև հայերի անունից հայկական կողմի կորուստների վերաբերյալ ապատեղեկատվություն տարածելու համար[6] (տե՛ս *Նկար 4*).

Նկար 4

«Կոտրված» հայկական օգտատերերի կողմից տարածվող ապատեղեկատվության օրինակ



Նկատի ունենալով այն, որ ընդհանուր համակարգչային գրագիտությունը Հայաստանում բավական ցածր մակարդակի վրա է[7], ադրբեջանական հաքերների (և ոչ միայն նրանց) համար հանրապետության բնակչության բավական լուրջ տոկոսը շարունակում է հանդիսանալ հեշտ թիրախ հարձակումների համար։

[6] Ադրբեջանի ՊՆ-ն խոստովանել է 5 զինծառայողի կորուստ, http://razm.info/97043

[7] Հայաստանում ինտերնետի միջին օգտատերը շարունակում է խոցելի մնալ հարձակումներից, *Սամվել Մարտիրոսյան,* http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15209&sphrase_id=59206

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԽՍՀՄ ՓԼՈՒԶՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

*Գագիկ Հարությունյան**

Հայտնի է, որ «Սառը պատերազմի» ժամանակաշրջանում խորհրդային գաղափարախոսական-տեղեկատվական համակարգը ենթարկվեց լուրջ փորձությունների [1]: Հետագա զարգացումները ցույց տվեցին, որ այն չկարողացավ արժանավայել դիմակայել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մարտահրավերներին: Գաղափարախոսական այլընտրանք առաջացնող տեղեկատվական գործողությունները, ի թիվս քաղաքական, տնտեսական և այլ գործոնների, թելադրեցին ԽՍՀՄ ղեկավարությանը՝ սկսած 1986-ից, իրագործել սկզբունքային բարեփոխումներ: Դրանց նպատակն էր խորհրդային համակարգն ավելի ադեկվատ և մրցունակ դարձնել աշխարհում ընթացող զարգացումների նկատմամբ: Նման շրջադարձն իր տրամաբանությամբ հիշեցնում էր «ձնհալի» փուլում կատարվածը: Սակայն այդ նոր ժամանակաշրջանը՝ «պերեստրոյկան» (վերակառուցում), որը ԽՍՀՄ նորանշանակ ղեկավար Մ.Գորբաչովի կարգախոսն էր, ի տարբերություն խրուշչովյան «ձնհալի», հանգեցրեց ոչ թե մասնակի ազատականացման և հասարակության զարգացման, այլ ԽՍՀՄ փլուզմանը 1991թ.:

«Պերեստրոյկայի» ընթացքում շեշտակի ազատականացվեցին խորհրդային կյանքի գրեթե բոլոր ոլորտները: Նախկին այլախոհներն ընտրվում էին համամիութենական և հանրապետական գերագույն խորհուրդների պատգամավորներ, տեղեկատվական տարածքը լի էր ազատամիտ հոդվածներով, գրքերով և հաղորդումներով, հայտնվում էին նոր թերթեր ու ամսագրեր: Այս գործընթացներին ակտիվորեն միացան նաև օտարերկրյա տեղեկատվական կառույցները և այլ ծառայություններ, որոնք «պերեստրոյ-

* «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

կա» երևույթի մեջ տեսան փայլուն հնարավորություններ սեփական աշխարհաքաղաքական նպատակներն իրագործելու առումով [2, 3]։

Եթե այդ բուռն շրջանը և ԽՍՀՄ փլուզումը դիտարկենք տեղեկատվական բնույթի խնդիրների տեսանկյունից, ապա պետք է հաշվի առնել ոչ միայն այն, որ խորհրդային «ագիտպրոպը» կորցրել էր նախկին հեղափոխական ավյունը և դարձել դոգմատիկ ու կազմալուծված համակարգ։ Կատարվածի օրինաչափությունը պայմանավորված էր (ի թիվս տարաբնույթ օբյեկտիվ և ոչ օբյեկտիվ այլ գործոնների) նաև նրանով, որ աշխարհը թևակոխել էր չորրորդ և հինգերորդ տեղեկատվական հեղափոխությունների դարաշրջան, իսկ խորհրդային հանրությունն իր մի շարք հատկանիշներով ավելի քան մոտ էր «տեղեկատվական հասարակությունների» վերաբերյալ Յու. Հայաշիի և Դ.Բելի պատկերացումներին [4]։ Այդ համատեքստում «Պերեստրոյկայի» բարդ գործընթացների տրամաբանությունն ըմբռնելու համար նպատակահարմար է վերստին անդրադառնալ խորհրդային տեղեկատվական ընդհանրական ռազմավարությանը։

Հեղափոխությունից գրեթե անմիջապես հետո խորհրդային իշխանությունները մշակում և հետևողականորեն սկսում են իրագործել երկրի գիտատեխնոլոգիական զարգացմանն ուղղված քաղաքականություն։ Բավական է նշել, որ անգամ քաղաքացիական պատերազմի տարիներին՝ 1918-1919թթ., հիմնվել էր 33 խոշոր գիտական ինստիտուտ, իսկ 1927թ. երկրում (որը դեռևս գտնվում էր ծանր տնտեսական վիճակում) արդեն գործում էր շուրջ 90 հետազոտական հաստատություն։

Գիտատեխնիկական ոլորտի զարգացումն առավել մեծ թափ առավ հետպատերազմյան փուլում։ Օրինակ, 1975թ. ԽՍՀՄ-ում գիտական հաստատություններում աշխատում էր շուրջ 1 մլն մասնագետ, ինչը կազմում էր աշխարհի գիտաշխատողների թվի մոտ մեկ քառորդը։ Նույն 70-80-ական թթ. ԽՍՀՄ-ում աշխատունակ բնակչության մոտ 80%-ն ուներ բարձրագույն կամ թերի բարձրագույն կրթություն։ Եթե հաշվի առնենք ոչ միայն ակադեմիական, այլև գերատեսչական ենթակայության հետազոտական հաստատությունները, ապա, համաձայն փորձագիտական գնահատականների (այս ոլորտում բացակայում են ճշգրիտ վիճակագրական

տվյալները, քանի որ նման կազմակերպությունների մի մասը կատարում էր ռազմարդյունաբերական համալիրի պատվերները, այդ պատճառով նրանց թվի մասին տեղեկությունները հստակ չեն), դրանց թիվն անցնում էր 5-6 հազարից:

Հարկ է նաև փաստել այն կարևոր իրողությունը, որ գիտելիքային-տեղեկատվական ոլորտի զարգացմանն էապես նպաստում էր նաև սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: ԽՍՀՄ-ում կրթությունն անվճար էր (ավելին՝ ուսանողները և ասպիրանտները ստանում էին կրթաթոշակներ), իսկ գիտաշխատողների, ինժեներների և տեխնիկական ոլորտի մասնագետների աշխատավարձերը համեմատաբար ավելի բարձր էին, քան այլ բնագավառներում (անգամ կուսակցական և վարչական) աշխատողներինը: Սակայն ներկայացված իրողություններն ունեին նաև այլ համատեքստ:

Կրթությանն ու գիտությանն ուղղված զանգվածային շարժումը և այդ ոլորտները կարևորելու ռազմավարությունը ձևավորում էին գիտելիքներին տիրապետող և գիտելիքներ ստեղծող հասարակություն: Նման հասարակության անդամներին, բնականաբար, չէր կարող բավարարել և համոզել կուսակցական պարզունակ ագիտացիան: Այդ պատճառով հանրությունում առաջանում էին թերահավատություն և յուրովի արտահայտվող դիմադրություն պաշտոնական գաղափարախոսության նկատմամբ: Ավելին, վարվող ագիտացիան, որը հաշվի չէր առնում միութենական և ինքնավար հանրապետությունների (որոնց թվում՝ նաև Ռուսաստանի Դաշնության) բնակչության ազգային առանձնահատկությունները, նպաստում էր ազգայնական և անջատողական տրամադրությունների առաջացմանը: Արդյունքում՝ հանրապետություններում ամրապնդվում էր այն համոզմունքը, որ ինքնուրույն գործելակերպն ավելի է համապատասխանում իրենց շահերին, քան կենտրոնի հրահանգներին հնազանդ հետևելը: Այդ համոզմունքները հետագայում հիմք հանդիսացան ԽՍՀՄ-ում ազգային բնույթի ոչ պաշտոնական կազմակերպությունների ձևավորման համար, որոնք ընդհանրական այլախոհական շարժման մաս կազմեցին:

Պետք է ամրագրել, որ գիտելիքների վրա խարսխված խորհրդային հանրության աշխարհընկալման և մենատիրական գաղափարախոսական քարոզչության դրույթների միջև գոյացած անտագոնիզմը շարունակաբար խորացավ և դարձավ խորհրդային համակարգի փլուզման հիմնական պատճառներից մեկը: Հատկանշական է, որ զարգացած հասարակություններից սպասվող «վտանգները» քաջ գիտակցել էին 3-րդ Ռեյխի առաջնորդները: Համաձայն նրանց մոտեցումների, գրավված երկրների բնակչությունը պետք է ստանար առավելագույնը տարրական կրթություն, ոչ ավելին: Նրանք հիմնավորված ենթադրում էին, որ գիտելիքներին տիրապետող հասարակություններում անխուսափելիորեն ծագելու է դիմադրություն նացիոնալ-սոցիալիզմի գաղափարախոսությանը և կառավարման մեթոդներին:

Վերադառնալով խորհրդային իրողություններին՝ կարելի է փաստել նաև հետևյալը: Արդեն հետպատերազմյան շրջանում խորհրդային վարչական-գաղափարախոսական ընտրանու («նոմենկլատուրա») իրողություններն ադեկվատ ընկալելու և համապատասխան որոշումներ կայացնելու կարողությունները սկսել էին զիջել ինչպես իրենց աշխարհաքաղաքական մրցակիցների քաղաքական ընտրանու, այնպես էլ սեփական երկրի հասարակության գիտելիքային-վերլուծաբանական հնարավորություններին: «Պերեստրոյկայի» շրջանում այս յուրատեսակ «խզումն» առաջացրեց մի իրադրություն, երբ «նոմենկլատուրան» կորցրեց հասարակությունը կառավարելու գրեթե բոլոր քարոզչական լծակները: Տեղեկատվական բնույթի խնդիրների տեսանկյունից այս, ինչպես և մի շարք այլ գործոնների համախումբը, ի վերջո, հանգեցրեց նրան, որ 1991թ. խորհրդային համակարգը փլուզվեց: Այդ փլուզմամբ ավարտվեց նաև երկբևեռ «Սառը պատերազմը» (որն ավելի մեծ թափով, բայց արդեն բազմակենտրոն ձևաչափով, վերսկսվեց մոտ 20 տարի հետո): ԽՍՀՄ աշխարհաքաղաքական մրցակիցները տոնում էին իրենց հաղթանակը խորհրդային կարգերը տապալած հասարակության հետ մեկտեղ: Այդ առիթով նկատենք, որ եթե 1917թ. «սոցիալիստական հեղափոխությունում» արձանագրվել էր «օտարերկրյա հետքը», ապա 1991թ. «ազատա-

կան հեղափոխությունում» օտարերկրյա զանազան ծառայությունների (որոնց թվում՝ տեղեկատվական ոլորտի) մասնակցությունն ակներև էր և մասշտաբային։ Արդեն XXI դարում հեղափոխություններ կատարելը (այսպես կոչված «գունավոր» տարբերակով) վերածվեց լավ մշակված քաղաքական-տեղեկատվական տեխնոլոգիայի [5]։ Միևնույն ժամանակ, հարկ է ամրագրել, որ նման հեղափոխությունները հնարավոր են միայն այն հասարակություններում, որոնցում կուտակվել են կրիտիկական քանակը գերազանցող որոշակի հիմնախնդիրներ։

«Ազատական հեղափոխությունից» որոշ ժամանակ անց կոմունիստական վարչակազմը տապալած հետխորհրդային հանրապետությունների տեղեկատվական ոլորտներում առաջացան լուրջ հիմնախնդիրներ գիտելիքների ձեռքբերման և «արտադրման» բնագավառում։ Խորհրդային կարգերի հետ միասին կազմալուծվեց շուրջ 70-ամյա աշխատանքի արդյունքում կայացած գիտակրթական և արդյունաբերական-տեխնոլոգիական համակարգը։ Արդյունքում՝ արդեն ազատական հետխորհրդային հասարակությունները հետընթաց ապրեցին և հայտնվեցին, ինչպես արդեն նշել ենք, *դեինդուստրիալացված* հասարակությունների կարգավիճակում [4]։

Դրամատիկ ընթացք ստացավ նաև ազատական գաղափարներ կրողների և այլախոհների մի զգալի մասի հետագա ճակատագիրը, որոնցից շատերը ձևավորվել էին նույն գիտակրթական միջավայրում [6]։ Համակարգի փլուզման արդյունքում նրանք կորցրին նախկինում իրենց ունեցած բարձր սոցիալական կարգավիճակը և հեղինակությունը հասարակությունում։ Այդ ամենի առիթով մի հայտնի այլախոհ բավական դիպուկ գնահատական է տվել տեղի ունեցածին. «Մեր թիրախը կոմունիստական կուսակցությունն էր, սակայն կրակեցինք հայրենիքի վրա»։ Մեկ այլ այլախոհ՝ ականավոր գրող, մեր հայրենակից Սերգեյ Դովլաթովը, որը ժամանակին ստիպված լքել էր հայրենիքը, նույնպես փոքր-ինչ զգացմունքային, բայց պատկերավոր արտահայտվեց ձևավորվող «նոր բարքերի» կապակցությամբ. «Կոմունիստներից հետո ամենից շատ ատում եմ հակակոմունիստներին»։

Հետխորհրդային զարգացումները հետևանք էին նաև մեկ այլ օրինաչափության: ԽՍՀՄ փլուզման արդյունքում խորհրդային համակարգի ընդդիմախոսների աշխարհայացքային–գաղափարական պատկերացումները հայտնվեցին բավական երկիմաստ վիճակում: Մոտ 70 տարի տևած կոմունիստական քարոզչությունը նրանց մեջ առաջացրել էր կայուն հակակրանք «համակարգի» հանդեպ: Զուգահեռ, «երկաթե վարագույրի» շնորհիվ, ընդդիմախոսների պատկերացումներն «ազատ աշխարհի» մասին, որոնք հիմնականում ձևավորվում էին օտարերկրյա ռադիոհաղորդումների ազդեցության տակ, նույնպես ավելի քան պարզունակ էին և իդեալականացված: Այլ խոսքով՝ «պերեստրոյկայի», ինչպես և հետագա զարգացումների շրջանում իրականության և սեփական պատկերացումների միջև «խզումը» բնորոշ էր ոչ միայն «նոմենկլատուրային», այլև այլախոհներին, ազգայնականներին և առհասարակ խորհրդային համակարգից դժգոհ բոլոր սոցիալական շերտերին:

Սթափեցման կամ, այլ խոսքով՝ իդեալականացված պատկերացումների և իրողությունների միջև խզումը վերացավ «փլուզումից» շատ չանցած, երբ սոցիալ-տնտեսական իրավիճակը կտրուկ վատացավ: Այնուամենայնիվ, կատարվածի համար պատասխանատվության գերակշիռ մասն ընկնում է դոգմատիկ «նոմենկլատուրայի» վրա, որը, համաձայն որոշ հետազոտողների, «փլուզելով ԽՍՀՄը, կատարեց իր վերջին հանցագործությունը»: Այդ համատեքստում օգտակար է անդրադառնալ չինական քաղաքական ընտրանու փորձին: Վերջինս «պերեստրոյկայից» ոչ շատ հետո նույնպես իրագործեց վերակառուցում, որի հետևանքով կոմունիստական այդ երկրում հասարակությունում ներդրվեցին ազգային-պահպանողական գաղափարները, իսկ տնտեսությունում՝ ազատական սկզբունքները (Դեն Սյաոպինի բարեփոխումները): Ի դեպ, այդպիսի քաղաքականություն իրագործելուն նպաստեց նաև այն հանգամանքը, որ այդ երկրում ձևավորվեց փորձագետներից և հետազոտողներից բաղկացած հատուկ հանձնաժողով, որն, ուսումնասիրելով խորհրդային համակարգի փլուզման պատճառները, խորհրդատվություն էր տրամադրում ղեկավարությանը, թե ինչպես խուսափել այն սխալներից, որոնք կա-

տարվել էին ԽՍՀՄ-ում: Արդյունքում՝ մշակվեցին խելամիտ մոտեցումներ, որոնք թույլ տվեցին Չինաստանին խուսափել այն «վատ սցենարներից», որոնց հետ ընդհարվեցին հետխորհրդային երկրները, և մեծապես զարգացնել սեփական հասարակությունը և պետությունը:

Հետխորհրդային հասարակություններում վերոնշյալ իրողությունների վերաբերյալ ըմբռնումները հստակեցվեցին փլուզումից որոշ ժամանակ հետո՝ XXI դարի սկզբից: Որպես նման ըմբռնման նյութականացված արդյունք կարելի է դիտարկել այդ հանրապետություններում և առաջին հերթին՝ Ռուսաստանում, նկատվող գիտակրթական–տեխնոլոգիական համակարգի վերականգնման միտումները:

Հետխորհրդային ժամանակաշրջանում խնդիրներ առաջացան նաև քարոզչական ոլորտում: «Ագիտպրոպին» փոխարինելու եկած լրատվամիջոցները հաճախ իրենց նյութերը նույնպես մատուցում էին ծայրահեղականացված, այսպես կոչված՝ «վուլգար ազատականության» դիրքերից, որոնք համեմվում էին նաև, հատկապես Չեչենական առաջին պատերազմի (1994-1996թթ.) ժամանակ, հակահայրենասիրական կոչերով: Վերջին հանգամանքը հիմք ծառայեց, որպեսզի տեղեկատվական ոլորտի փորձագետները նման տեղեկատվական քաղաքականությունը որակեն որպես «պատերազմ սեփական ժողովրդի դեմ»:

Սակայն պետք է ընդունել, որ որոշ ժամանակ անց հետխորհրդային մի շարք հանրապետություններում, մասնավորապես՝ Ռուսաստանում, լրատվամիջոցների գործունեությունը սկսում է հետևողականորեն բարելավվել: Հատկանշական է, որ սկսած 2014 թվականից՝ ռուսաստանյան հեռուստաալիքներում հայտնվեց «Ագիտպրոպ» հաղորդումը, որի հեռուստավարը (Կ.Սյոմին) կարողանում է համատեղել նախկին «Ագիտպրոպ»-ի հեղափոխական եռանդը և արդի իրողությունների տրամաբանությունը: Հարկ է նաև շեշտել, որ «երկրորդ Սառը պատերազմի» պայմաններում այդ երկրի որոշ տեղեկատվական միջոցներ կատարում են գրեթե նույն դերն արևմտյան հանրության համար, ինչ վերոնշյալ «Ամերիկայի ձայնը», «Ազատությունը» և *BBC-ն* նախորդ դարի 60-80-ական թվականներին: Օրինակ, *RT* միջազգային բազմալեզու հեռուստակայանը

(տնօրեն՝ Մարգարիտա Սիմոնյան) 2013թ. օրական դիտել է շուրջ 700 մլն հեռուստադիտող, իսկ *«YouTube»*-ում *RT*-ն նորություններ հաղորդող առաջին հեռուստակայանն էր, որն անցավ 1 մլրդ դիտարկման նիշը: Նման ձեռքբերումները պայմանավորված են նրանով, որ *RT*-ն տեղեկատվության իր օբյեկտիվ լուսաբանումներով այլընտրանք է ստեղծում արևմտյան հանրության համար, որտեղ նկատվում են «տեղեկատվական» տոտալիտարիզմի բոլոր նախանշանները՝ ինչ-որ տեղ հիշեցնելով *ԽՍՀՄ* նմանատիպ բարքերը:

Ակնհայտ է, որ հինգերորդ տեղեկատվական հեղափոխության պայմաններում «փակ տեղեկատվական հասարակության» մասին խոսելը լուրջ չէ, սակայն ազգային-պետական մակարդակով, պետական կամ ֆինանսատնտեսական առանձին ընկերությունների (որոնց թվում են նաև մեդիա-հոլդինգները) շահերի տրամաբանությունից ելնելով՝ ներկայում կիրառվում են այսպես կոչված «փափուկ», մանիպուլյացիոն տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս վերահսկել և էապես ուղղորդել լայն հանրությանը տրամադրվող տեղեկատվությունը:

Օգտագործված գրականություն

1. Գագիկ Հարությունյան, Հետպատերազմյան տեղեկատվական քաղաքականությունը ԽՍՀՄ-ում, «Գլոբուս» , # 1 (80), 2017:
2. Красильников Р.С., «Новые крестоносцы: ЦРУ и перестройка», М., Олма - Пресс, 2004.
3. *Петер Швейцер,* «Победа: Роль тайной стратегии администрации США в распаде Советского Союза и социалистического лагеря», http://sheba.spb.ru/lib/shveicer-pobeda.htm
1. Գագիկ Տերտերով, Տեղեկատվական և դեինդուստրիալիզացված հասարակություններ, «21-րդ ԴԱՐ», # 4 (68), էջ 16, 2016:
2. *Գագիկ Հարությունյան,* Գունավոր հեղափոխություններ, «21-րդ ԴԱՐ», # 4 (68), էջ 4, 2016:
3. *Борис Кагарлицкий, «*Политология революции», М., «Алгоритм», 2007.

«ՈՒՂԵՂՆԵՐԻ ԱՐՏԱՀՈՍՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Կարեն Վերանյան*

Մտավոր կապիտալ. Համաշխարհային միգրացիոն գործընթացներն էական ազդեցություն են թողնում ազգ-պետություններում *մարդկային կապիտալի* (ՄԿ) պահպանման և զարգացման հարցերի վրա: Առավել խնդրահարույց են համաշխարհային միգրացիոն հոսքերի ազդեցության համատեքստում երկրների ՄԿ և հատկապես վերջինի *մտավոր կապիտալի կամ ներուժի* (հանդիպում է նաև «ինտելեկտուալ կապիտալ» ձևակերպումը) կուտակումն ու վերարտադրումը: Ինչպես ցույց են տալիս միջազգային հետազոտությունները, զարգացող երկրների քաղաքական վերնախավերը, որպես կանոն, լուրջ խնդրի առջև են կանգնում տեղի բնակչության մտավոր կապիտալի կուտակման և զարգացման գործում, քանի որ բարձր որակավորում ունեցող մասնագետներից շատերը ձգտում են իրենց մտավոր ռեսուրսները ներդնել առավել զարգացած ու բարեկեցիկ երկրներում: Տվյալ պետության ՄԿ և նրա մտավոր ռեսուրսների վերարտադրողականության ցիկլի պահպանման գործընթացը պայմանավորված է տվյալ երկրի բնակչության բարեկեցության ընդհանուր մակարդակով, առկա քաղաքական ինստիտուտների կայացածությամբ, ինչպես նաև հասարակության ազգային բարոյահոգևոր, արժեքաբանական ընդհանուր ընկալումներով և կողմնորոշումներով:

Մասնագիտական գրականությունում շատ է հանդիպում *ազգային մտավոր կապիտալ* հասկացությունը: Ազգային մտավոր կապիտալը տվյալ ազգ-պետությունում մտավոր ռեսուրսների ամբողջությունն է (նյութական և հոգևոր արդյունքները): Նշենք, որ համաշխարհային SS ոլորտի թռիչքաձև զարգացման ներկա տեմպերի պայմաններում հատկապես խոցելի են դարձել ազգային մտավոր կապիտալի պահպանումն ու զարգացումն առաջին հերթին փոքր ազգ-պետությունների համար:

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

Զարգացած երկրների պարագայում ազգային մտավոր կապիտալ հասկացության շրջանակներն առավել ընդգրկուն են և ներառում են նաև այլ երկրներում այս կամ այն ոլորտում ներդրված իրենց մտավոր կապիտալի մի հատվածը: Ի տարբերություն զարգացած երկրների, փոքր տնտեսություններ ունեցող զարգացող երկրների դեպքում ազգային մտավոր կապիտալի ներդրումներն այլ երկրների տնտեսություններում (հիմնականում՝ գիտության, կրթության, բժշկության ոլորտներում համատեղ ծրագրեր, գյուտեր և այլն), որպես կանոն, չունեն մտավոր ներդրումների արդյունքների *հետադարձ* ազդեցություն:

«Ուղեղների արտահոսք». պատճառները և հետևանքները. Պետությունից մտավոր կապիտալի «արտագաղթին» կամ, ինչպես ընդունված է միջազգային պրակտիկայում՝ *«ուղեղների արտահոսքին»* (*brain drain*) կարող են նպաստել միջազգային, տարածաշրջանային, ինչպես նաև ներպետական նշանակության քաղաքական կամ տնտեսական կատակլիզմները: Հարկ է նշել, որ «ուղեղների արտահոսք» հասկացությունն առաջին անգամ կիրառվել է 1950-ականների սկզբներին, երբ անգլիացի գիտնականները տեղափոխվում էին Միացյալ Նահանգներ: Ինչպես ասվեց, երկրից մտավոր ներուժի արտահոսքին նոր թափ են հաղորդում համաշխարհային SS զարգացման ներկա տեմպերը, որոնք լայն հնարավորություններ են ստեղծում բարձրակարգ մասնագետների համար՝ իրենց մասնագիտական հմտություններն առավել բարեկեցիկ ու զարգացած երկրներում ներդնելու առումով:

Հասարակության մտավոր ներուժի, բարձրակարգ մասնագետների արտահոսքը, որպես կանոն, էական ազդեցություն է ունենում տվյալ երկրի տնտեսության զարգացման, հասարակության բարեկեցության ապահովման հարցերի վրա: Երկրի տնտեսության զարգացման համար *անհրաժեշտ-կրիտիկական* մտավոր ռեսուրսների բացակայությունը կարող է երկիրը կանգնեցնել տնտեսական և քաղաքական լրջագույն ճգնաժամերի շեմին:

Հասարակության մտավոր ներուժը, լինելով տնտեսության զարգացման կարևորագույն նախապայման, տրամաբանորեն առանցքային դերակատարություն ունի նաև երկրի *ֆինանսական կապիտալի* ձևա-

վորման և կուտակման գործում: Հետևաբար, երկրից «ուղեղների արտահոսքը» զրկում է տվյալ հասարակությանը ոչ միայն արժեքավոր ՄԿ-ից և, առավել ևս՝ նրա մտավոր ռեսուրսներից, այլև նպաստում է *ֆինանսական ազգային կապիտալի* դուրսմղմանն արտերկիր և վերջինիս ներդրմանն այլ երկրներում:

Միջազգային փորձագիտական գնահատականներով՝ յուրաքանչյուր բարձրակարգ մասնագետի արտագաղթի հետևանքով պետության տնտեսության համընդհանուր կորուստները (մտավոր, նյութական-ֆինանսական), ներառյալ՝ կողմնակի, ածանցյալ կորուստները, կարող են գնահատվել մինչև 1մլն դոլար[1]:

Ինչպես ցույց են տալիս միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ և այլն) փորձագիտական գնահատականները, «ուղեղների արտահոսքից» զգալիորեն տուժում են հատկապես փոքր տնտեսությամբ զարգացող երկրները: 2004թ. հրապարակվեց Լինդսի Լոուելի, Ալան Ֆինդլիի և Էմմա Սթյուարթի հիմնարար հետազոտությունը (*Brain Strain: Optimising Highly Skilled Migration From Developing Countries*), որում փորձագետները եկան այն եզրահանգման, որ բարձրագույն կրթության դիպլոմ ունեցող գրեթե յուրաքանչյուր 10-րդ անհատ, որպես կանոն, ծնվել է զարգացող երկրում, իսկ զարգացող երկրներում ծնված գիտնականների և ինժեներների 30-50%-ը բնակվում ու աշխատում է աշխարհի զարգացած երկրներում[2]: Այլ տվյալներով՝ այդ ցուցանիշները, պայմանավորված տարածաշրջանային քաղաքական կամ տնտեսական խոր ճգնաժամերով, հասնում են մինչև 55-60%-ի:

Մասնագիտական գրականությունում ընդունված է նաև *«ուղեղների վատնում»* (*Brain Waste*) հասկացությունը, որը հատուկ է զարգացող շուկայական հարաբերություններ ունեցող պետություններին: Այն բնութագրում է մի իրավիճակ, երբ երկրի տնտեսությունը չի կարողանում ամբողջությամբ ներգրավել հասարակությունում առկա մտավոր բոլոր ռեսուրսները, ինչի հետևանքով մտավոր ներուժի ձևավորման և զար-

[1] http://gtmarket.ru/laboratory/expertize/2008/1653
[2] http://gtmarket.ru/laboratory/expertize/2008/1653

գացման գործում պետության իրականացրած հսկայածավալ երկարաժամկետ նյութական, ֆինանսական ներդրումների մի հատված ուղղակի «փոշիանում» է: «Ուղեղների վատնման» երևույթը կարող է պայմանավորված լինել տվյալ պետության աշխատաշուկայի սահմանափակ լինելու հանգամանքով:

«Ուղեղների արտահոսքի» զսպման մեխանիզմները. Հասարակության մտավոր ներուժը հնարավոր է գնահատել ինչպես նրա քանակական, այնպես էլ որակական չափորոշիչներով: Որքան բարեկեցիկ և զարգացած է տվյալ հասարակությունը, որքան կայացած են ժողովրդավարական ինստիտուտներն ու քաղաքական համակարգը, այնքան բնակչության ընդհանուր թվաքանակին համամասնորեն համաչափ են նրա մտավոր ռեսուրսների քանակական-որակական ցուցանիշները:

Որոշ զարգացող երկրներ ազգային մտավոր ներուժի պահպանման և «ուղեղների արտահոսքի» զսպման նպատակով ընդունել են բարձրակարգ մասնագետների արտագաղթը սահմանափակող իրավական դրույթներ: Սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ նման սահմանափակումներն այնքան էլ արդյունավետ չեն «ուղեղների արտահոսքի» կանխման համար և, որպես կանոն, պետություններին կանգնեցնում են տնտեսական և քաղաքական նշանակության առավել խորքային խնդիրների առջև: Հարցն այն է, որ «ուղեղների արտահոսքը» միանշանակ չի ենթադրում բարձրորակ մասնագետների ֆիզիկական արտագաղթ երկրից: Ներկա տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս մտավոր ռեսուրսները կուտակել կամ ներդնել այլ երկրների տնտեսական միջավայրում՝ առանց մտավոր ներուժի ֆիզիկական արտագաղթի:

Մյուս կողմից, «ուղեղների արտահոսքի» հետ այս կամ այն չափով բախված զարգացող երկրներից շատերը փորձում են տարբեր իրավական, տնտեսական նշանակության բարեփոխումների միջոցով երկրում տնտեսական-քաղաքական դրական միջավայր ապահովել՝ ազգային մտավոր կապիտալի զարգացման նպատակով: Խնդրի կարգավորման հիմնական տարբերակներից մեկը վերաբերում է այսպես կոչված

«ուղեղների փոխանակման» երևույթին, որի համաձայն՝ տվյալ պետությունը փորձում է ոչ թե վերադարձնել *ազգային մտավոր կապիտալը*, այլ օտար երկրի կամ երկրների հետ իրականացնել մտավոր ռեսուրսների փոխանակման ծրագրեր: Սակայն, ի տարբերություն ազգային մտավոր կապիտալի, այլ երկրների հետ մտավոր ռեսուրսների փոխանակման ծրագրերը, որպես կանոն, չեն կարողանում ապահովել տնտեսությունում օտարերկրյա մտավոր ներուժի ներգրավումից ակնկալվող արդյունքները, որի հիմնական պատճառներից են օտարերկրյա մտավոր կապիտալի ներդրման բարձր վարձատրության ֆինանսական պահանջները: Վերջին հանգամանքն առավել բնորոշ է զարգացած երկրներից դեպի զարգացող տնտեսություններ օտարերկրյա մտավոր կապիտալի ներգրավման դեպքերին:

Զարգացող երկրներում հաճախ կարելի է հանդիպել ազգային մտավոր կապիտալի ներդրման մեկ այլ տարածված մոդելի, որը միջազգային պրակտիկայում հայտնի է որպես *«ուղեղների արտահանում»* (*Brain Export*) կամ *«ուղեղների շրջանառություն»* (*Brain Circulation*)[3]: Ըստ այդ մոդելի, տվյալ պետությունում ստեղծելով տեղական կրթական հիմնադրամ կամ կազմակերպություն և այս ուղղությամբ ներգրավելով ազգային մասնավոր (հազվադեպ՝ նաև պետական) ֆինանսական զգալի կապիտալ՝ ազգային մտավոր ռեսուրսների մի հատված ուղարկվում է արտերկիր ուսուցման, վերարտակավորման նպատակով:

Մոդելն իր առջև խնդիր է դնում ուսուցման արդյունքում արտերկրից վերադարձնել նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերած, վերապատրաստում անցած ազգային մտավոր ներուժի այդ հատվածը և այն ներդնելով տեղի տնտեսությունում՝ ստանալ ակնկալվող բարձր արդյունավետություն: Սակայն պետք է նշել, որ զարգացող երկրներում այս մոդելը հիմնականում ձախողվում է, քանի որ այդ մտավոր ներուժի ճնշող մեծամասնությունը, որպես կանոն, չի վերադառնում հայրենիք, նախընտրում է իր մասնագիտական հնարավորությունները ներդնել առավել բարեկեցիկ երկրում և դրանով իսկ «փոշիացնում» է ազգային մտա-

[3] http://gtmarket.ru/laboratory/expertize/2008/1653

վոր կապիտալի կրթության ապահովման վրա ներդրված հսկայածավալ ազգային ֆինանսական ու նյութական միջոցները:

Հարցի կարգավորման համար զարգացող երկրներում փորձել են մշակել արտերկրում ուսուցում և բարձր որակավորում ստացած մասնագետների վերադարձման իրավաքաղաքական մեխանիզմներ, սակայն, որպես կանոն, դրանք հիմնականում չեն կարողացել արդարացնել ակնկալիքները: «Ուղեղների շրջանառության» մոդելը կարող է արդյունավետ լինել զարգացած երկրների պարագայում, որոնք, մի կողմից, հնարավորություն են ստանում զարգացնել արտերկրում իրենց ազգային մտավոր կապիտալն ու բարձրացնել վերջինի վարկանիշը, մյուս կողմից՝ ամրապնդում են համագործակցությունն արտերկրի մտավոր ներուժի հետ:

Զարգացած երկրները, որտեղ գիտության և հետազոտությունների վրա ծախսվում են զգալի ֆինանսական միջոցներ, կարողանում են գրավիչ միջավայր ապահովել արտերկրից օտարազգի մտավոր կապիտալի ներկրման հարցում, որն առավել հայտնի է որպես *«ուղեղների ներհոսք»* (*Brain Gain*): Արտերկրից «ուղեղների ներհոսքի» ապահովման հարցում զգալի հաջողություններ են արձանագրել Միացյալ Նահանգները, Կանադան, եվրոպական առաջատար երկրները (Գերմանիա, Մեծ Բրիտանիա): Մի քանի վիճակագրական տվյալներ ներկայացնենք: Տարբեր հաշվարկներով, ԱՄՆ-ը գիտահետազոտական (*Research and Development*) ոլորտին տարեկան հատկացնում է շուրջ $475 մլրդ (2013թ.), ինչը կազմում էր երկրի ՀՆԱ 2.8%-ը: Չինաստանը ոլորտի զարգացմանը տրամադրում է $409 մլրդ, երկրի ՀՆԱ 2.1%-ը (2015թ.): Հաջորդաբար բարձր են Ճապոնիայի ($170 մլրդ), Գերմանիայի ($108 մլրդ) ցուցանիշները: Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանը գիտության 7 հետազոտությունների զարգացման համար տարեկան հատկացնում է ընդամենը $43 մլրդ՝ այդ ցուցակում զբաղեցնելով 9-րդ հորիզոնականը (դա կազմում է երկրի ՀՆԱ 1.2%-ը)[4]: Եվս մի քանի տվյալ. տարբեր հաշվարկներով՝ գիտահետազոտական, փորձարարա-կոնստրուկտորական աշխատանքներին ուղղված ԽՍՀՄ ներքին ծախսերը կազմում էին վերջինիս

[4] https://data.oecd.org/rd/gross-domestic-spending-on-r-d.htm

ՀՆԱ 5%-ը: Ընդ որում, 1985թ. վիճակագրությամբ, եթե հիմնարար հետազոտությունների ուղղությամբ ԽՍՀՄ և ԱՄՆ ֆինանսավորումը կազմում էր ընդհանուր գիտահետազոտական գործունեությանը հատկացվող ֆինանսավորման համապատասխանաբար 13 և 14%-ը, ապա կիրառական հետազոտությունների ֆինանսավորման հարցում ԽՍՀՄ մասնաբաժինն անհամեմատ գերազանցում էր ԱՄՆ ցուցանիշը՝ կազմելով 61%, իսկ ԱՄՆ-ը՝ համապատասխանաբար 22%: Ընդհանուր գիտահետազոտական աշխատանքների հաշվարկում փորձարարա-կոնստրուկտորական մշակումների ֆինանսավորման հարցում ԽՍՀՄ մասնաբաժինը կազմում էր ընդամենը 27%, Միացյալ Նահանգների համապատասխան ցուցանիշն անհամեմատ բարձր էր՝ 64%[5]:

Հայաստանի ազգային մտավոր կապիտալը. Ինչպես նշեցինք, «ուղեղների արտահոսքն» առավել խոցելի է հատկապես զարգացող և փոքր շուկայական տնտեսությամբ երկրների համար, ինչպիսին նաև Հայաստանն է: Կարելի է հաստատապես ասել, որ խորհրդային կարգերի ժամանակաշրջանում Հայաստանի մտավոր ներուժն իրապես ունեցավ թռիչքային զարգացում, ինչի արդյունքում խորհրդային ամբողջ տարածքում Հայաստանը ԽՍՀՄ մտավոր-գիտական կապիտալի համընդհանուր մասնաբաժնում Մոսկվայից հետո արձանագրում էր լավագույն ցուցանիշները՝ Ուկրաինայի և Բելառուսի կողքին:

Խորհրդային կարգերի փլուզումը խորքային ազդեցություն թողեց նաև Հայաստանի ազգային մտավոր կապիտալի պահպանման վրա: Ղարաբաղյան պատերազմը, Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի քաղաքական ու տնտեսական շրջափակումն էապես խթանեցին Հայաստանից «ուղեղների արտահոսքը», ինչի հետևանքով երկիրը կանգնեց քաղաքական և տնտեսական ճգնաժամի առջև:

Ներկայում ևս Հայաստանը կանգնած է ազգային մտավոր կապիտալի կուտակման և վերարտադրման խնդրի առջև: Ինչպես ցույց են տալիս միջազգային հեղինակավոր վարկանիշային կազմակերպությունների փորձագիտական գնահատականները, Հայաստանի տնտեսության զար-

[5] *Nelson R.,* National Innovation System. New York, Oxford, 1993.

գացման խոչընդոտներից մեկը երկրի ՄԿ և հատկապես դրա մտավոր ռեսուրսների արտահոսքն է: Արդյունքում՝ երկիրը կանգնել է ազգային մտավոր կապիտալի կուտակմանն ու վերարտադրմանն անհրաժեշտ *սահմանային-կրիտիկական* շեմին, որն արգելակում է քաղաքական, տնտեսական բարեփոխումների գործընթացը:

Մյուս կողմից, Հայաստանում գիտության ոլորտի պետական և մասնավոր ֆինանսավորման բավական ցածր ցուցանիշներն իրենց հերթին նպաստեցին երկրում մտավոր կապիտալի մեկ այլ կարևոր հատվածի մղմանը դեպի երկրի տնտեսության ոչ մտավոր գործունեության դաշտ, հիմնականում՝ առևտրի և հանրային ծառայությունների սպասարկման ոլորտներ: Մասնագիտական գրականությունում այս երևույթն առավել հայտնի է որպես *«ուղեղների ներքին արտահոսք»*, երբ փոխվում է ոչ թե երկիրը, այլ գործունեության բնույթը կամ միջավայրը: Ավելին, «ձախողված երկրների» վարկանիշային վերջին տարեկան զեկույցների գնահատականների համաձայն, Հայաստանը «կաղում» է հատկապես ՄԿ և նրա մտավոր ռեսուրսների արտահոսքի ցուցանիշով, այն դեպքում, երբ, կրկին այդ զեկույցների տվյալներով, Հայաստանի ենթացուցիչների շարքում լավագույն արդյունքը գրանցվել է հանրային ծառայությունների բարեփոխումների ոլորտում:

Ներկայացնենք որոշ վիճակագրական տվյալներ. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն, Հայաստանում գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների գիտաշխատողների թվաքանակը 2015թ. ընդամենը 5044 էր, որից 4164-ը հետազոտողներ և տեխնիկներ էին, մնացածը՝ օժանդակ անձնակազմ: Դժվար է չհամաձայնել, որ այս ցուցանիշները, մեղմ ասած, բավական համեստ են և, դժբախտաբար, համահունչ երկրում գիտության զարգացման ներկա տեմպերին: Ինչպես ցույց է տալիս համեմատական վիճակագրությունը, գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքանակը վերջին տարիներին նվազման միտում է արձանագրել: Եթե 2011թ. ոլորտում ներգրավված էր շուրջ 5718 գիտաշխատող, իսկ 2013թ.՝ 5230, ապա 2015թ.,

ինչպես նշեցինք, գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքանակը 5044 էր: Նշենք նաև, որ 2014թ. գրանցվել է ցուցանիշի շեշտակի աճ՝ 5627, որը կտրուկ նվազել է հաջորդ տարվա արդյունքներում[6]:

Տարբեր երկրներ հասարակության մտավոր ռեսուրսների զարգացման գործում ներգրավել են նաև իրենց սփյուռքի մտավոր հնարավորությունները: Հայաստանն աշխարհի սակավաթիվ երկրներից է, որն ունի ազդեցիկ սփյուռք: Խորհրդային կարգերի փլուզումից հետո Հայաստանում ազգային մտավոր կապիտալի զարգացման հարցում երկրի իշխանությունները տարբեր ծրագրերում փորձել են ներդնել նաև հայկական սփյուռքի մտավոր ռեսուրսները: Սփյուռքի մտավոր ներուժը նույնպես հայության ազգային մտավոր կապիտալի կարևոր բաղկացուցիչն է: Հայաստանի խնդիրն է՝ երկրում ձևավորել բարենպաստ միջավայր՝ հայության մտավոր կապիտալի ներհոսքի ապահովման և արդյունավետ ներդրման համար:

Մինչև վերջին տասնամյակները միջազգային պրակտիկայում, որպես կանոն, սփյուռք-պետություն փոխհարաբերություններում առաջնային նշանակություն է տրվել ֆինանսական ազգային կապիտալի կուտակմանը՝ որպես երկրի տնտեսության զարգացման կարևոր նախապայման: Վերջին տասնամյակներում, պայմանավորված նաև գիտատեխնոլոգիական առաջընթացով, առաջնակարգ նշանակություն է ստանում սփյուռքի մտավոր կապիտալը՝ որպես տվյալ պետության զարգացման գրավական: Այս տեսանկյունից, հայկական սփյուռքը բացառություն չէ, քանի որ դեռևս մեծ նշանակություն ենք տալիս հայկական համայնքների ոչ այնքան մտավոր, որքան ֆինանսական կապիտալի ներգրավմանը Հայաստանի տնտեսության զարգացման գործին: Թեև հայաստանյան իրականությունում հայկական սփյուռքի մտավոր ռեսուրսների ներդրման գործընթացը ֆինանսական կապիտալի համեմատ շատ ավելի բարդ է և խորքային, սակայն դրա իրացման պարագայում այն կարող է ենթադրել ակնկալվող արդյունքների բարձր արդյունավետություն և երկարաժամկետ հեռանկարներ:

[6] http://armstat.am/file/doc/99499403.pdf

Հիմնական հարցերից մեկն էլ այն է, որ թեև հայկական սփյուռքը տիրապետում է զգալի մտավոր կապիտալի, սակայն այսօր բավական բարդ է սահմանել կամ հստակեցնել՝ այդ մտավոր կապիտալի ո՞ր մասն է համարվում ազգային, որը՝ ոչ: Առաջին հայացքից և, թերևս, թյուրիմացաբար կարելի է հաստատել, որ ազգային մտավոր կապիտալի այդ հատվածի կրողները մեր հայրենակիցներն են, հետևաբար՝ կապիտալը նույնպես հայկական է: Այն դեպքում, երբ այստեղ առաջնային խնդիրը պարզելն է, թե որքանով է հայկական սփյուռքի մտավոր կապիտալը մասնակցում Հայաստանի և համայն հայության ազգային մտավոր կապիտալի կուտակման ու զարգացման գործին: Դժբախտաբար, սփյուռքահայության մտավոր կապիտալի մեծ հատվածը ներդրվում է բնակության երկրի տնտեսությունում, և, թերևս, քիչ ծավալն է բաժին հասնում Հայաստանի ու հայության ազգային կապիտալին:

Սակայն այս հարցում կա նաև հուսադրող գործոն, այն է՝ մերօրյա տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների առաջընթացը մեծ հնարավորություններ է տալիս դեպի Հայաստան արտերկրի հայկական համայնքների մտավոր կապիտալի ներհոսքի հարցում՝ առանց այդ մտավոր կապիտալը կրողների ֆիզիկական ներգաղթի: Այս ուղղությամբ անհրաժեշտ հնարավոր գործնական քայլերից պետք է համարել հայաստանյան և արտերկրի հայկական համայնքների միջև գիտատեխնոլոգիական, կրթական համատեղ միջնաժամկետ, երկարաժամկետ ծրագրերի նախաձեռնումը, որը կշահագրգռի սփյուռքի մեր հայրենակիցներին՝ իրենց գիտական, կրթական կապիտալը մասնակիորեն ուղղել Հայաստանի տնտեսության զարգացմանը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐ ՈՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Վահրամ Հովյան[*]

Որպես Մերձավոր և Միջին Արևելքի հայկական սփյուռքի հենասյուներ ներկայում հանդես են գալիս Լիբանանի, Սիրիայի, Իրանի և Թուրքիայի հայ համայնքները[1]։ Մյուս հայ համայնքները թե՛ թվաքանակով և թե՛ կազմակերպչական հաստատությունների քանակով էապես զիջում են վերջիններիս՝ դիտարկվելով հիմնականում որպես տեղային նշանակության ընդհանրություններ։

Թվարկված չորս համայնքներն էլ ներկայում գտնվում են սպառվելու վտանգի առջև։ Չնայած սիրիական կառավարական բանակի կողմից Հալեպի ազատագրումից հետո ինչպես տեղի ազգային իշխանությունները, այնպես էլ տարածաշրջանային և համազգային հայկական կառույցները ձեռնամուխ են եղել տեղի հայ համայնքի վերականգնմանը, այնուամենայնիվ, դեռևս լուծման կարոտ բազմաթիվ խնդիրներ կան։ Նախ՝ համայնքն արդեն իսկ հսկայական կորուստներ է կրել սիրիական ճգնաժամի հետևանքով։ Նախքան քաղաքի ազատագրումը տեղի հայ համայնքի թվաքանակն ամենալավատեսական հաշվարկներով կազմում էր մոտ 10 հազ.։ Բացի այդ, պատերազմը Սիրիայում դեռևս ավարտված չէ։ ԻՊ խմբավորումները գտնվում են Իդլիբում՝ Հալեպից ընդամենը 60 կմ հեռավորության վրա։ Սիրիական կառավարական զորքերն ազատագրել են Հալեպ քաղաքը, բայց ոչ Հալեպի նահանգը։ Իսկ վերջնական խաղաղության հաստատման հեռանկարները դեռևս անորոշ են։ Հետևաբար, Լիբանանի, Իրանի և Թուրքիայի հայ համայնքների կողքին Սիրիայի հայ համայնքը, որն

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ, Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար։

[1] Լիբանանի հայ համայնքի թվաքանակը 70-80 հազ. է, Իրանինը՝ 80 հազ., Թուրքիայինը՝ 80 հազ.։ Սիրիահայության թվաքանակը նախքան 2011թ. սիրիական ճգնաժամը կազմում էր մոտ 70 հազ.։ Ներկայում, համաձայն ՀՀ Սփյուռքի նախարարության տվյալների, այն կազմում է մոտ 25 հազ.։

անասելի զրկանքների գնով կարողացավ պահպանել իր վերջին բեկորները կործանումից, ներկայում միայն վերապահումով կարելի է համարել Մերձավոր և Միջին Արևելքի հայկական սփյուռքի հենասյուն:

Մյուս երկրներում թեև դրությունը համեմատաբար կայուն է (համենայնդեպս համեմատելի չէ Սիրիայում տիրող իրավիճակի հետ), այնուամենայնիվ, հաշվի առնելով ինչպես անցյալի փորձը, այնպես էլ զարգացումների ընթացքն ու հնարավոր սցենարները, կարելի է ասել, որ բացառված չէ ոչ հեռավոր ապագայում իրավիճակի ապակայունացումն այդ երկրներում նույնպես:

Ներկայում միայն փխրուն խաղաղություն է տիրում Լիբանանում: Վերջինս, լինելով փոքր երկիր, այնուամենայնիվ, բնորոշվում է էթնիկ և կրոնական բազմազանությամբ: Այստեղ բախվում են թե՛ տարածաշրջանային տերությունների, թե՛ գերտերությունների շահերը, ինչը, զուգակցվելով գրեթե մշտական անկայուն միջավայրի հետ, ցանկացած պահի կարող է պատերազմական իրավիճակի առաջացման պատճառ դառնալ[2]: Հետևաբար, նոր անհանգիստ իրավիճակի առաջացումը Լիբանանում լիովին հավանական է՝ կապված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններով պայմանավորված հնարավոր ճգնաժամի առաջացման հետ:

Իրանի պարագայում կարելի է ասել, որ թեև ԱՄՆ-ի հետ հարաբերություններում սառույցը նախագահ Բարաք Օբամայի օրոք զգալիորեն հալվեց՝ կապված Իրանի միջուկային ծրագրի շուրջ 2015թ. նոյեմբերի 24-ին Ժնևում ձեռք բերված պայմանավորվածությունների հետ, սակայն ճգնաժամն այդ երկու երկրների միջև դեռևս հեռու է հաղթահարված լինելուց: Չմոռանանք, որ 1979-ից ցայսօր չկան դիվանագիտական հարաբերություններ ԱՄՆ-ի և Իրանի միջև: Եվ ապագայում էլ չի բացառվում հարաբերությունների սրումն այդ երկու երկրների միջև, ինչի միտումները ներկայում երևում են: ԱՄՆ վերջին նախագահական ընտրություններից անմիջապես հետո Իրան-ԱՄՆ հարաբերություններն արդեն իսկ կրկին սրվելու միտում են ցուցաբերում՝ պայմանավորված այս անգամ արդեն ԱՄՆ նոր վարչակազմի արտաքին քաղաքականության հետ: Նախ՝ նոր

[2] Տե՛ս, օրինակ, Իրան Հըզպալլայի միջոցով «պատգամ» կ'ուղարկէ Իսրայէլին եւ Թրամփին, Նոր օր, 2017թ., փետրվարի 23, թիվ 8:

նախագահ Դոնալդ Թրամփի ընդգծված իսրայելամետ քաղաքականությունը չի կարող համապատասխան արձագանք չգտնել Իրանում, և երկրորդ՝ վերջինիս հրթիռային փորձարկումներից հետո ԱՄՆ նոր վարչակազմը գնաց Իրանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցները վերականգնելու ճանապարհով, իսկ նախագահ Դոնալդ Թրամփը չբացառեց Իրանի դեմ ռազմական գործողությունները: Այսպիսով, ԱՄՆ վերջին նախագահական ընտրություններից հետո ամերիկա-իրանյան հարաբերությունները միտում ունեն վերադառնալու Իրանում նախագահ Մահմուդ Ահմադինեժադի օրոք (2005-2013թթ.) եղած հարաբերությունների մակարդակին, երբ երկու երկրները երբեմն գտնվում էին պատերազմի (զինված բախման) շեմին: Իրանում նույնպես հերթական նախագահական ընտրություններից հետո կարող են կրկին իշխանության ղեկին չափավորներին կամ բարեփոխիչներին փոխարինել կոշտ գծի կողմնակից պահպանողականները և գնալ առճակատման ԱՄՆ-ի հետ:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա այդ երկրում ավանդաբար առկա հայատյացությանն ու ազգային և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հալածանքներին վերջին տարիներին գումարվում են Թուրքիայի ներքին կյանքն ապակայունացնող այնպիսի գործոններ, ինչպիսիք են.

- քրդական հարցի սրումը, որը բավական հրատապ է դարձել հատկապես սիրիական ճգնաժամի համատեքստում,
- պայքարն աշխարհիկության և իսլամիզմի միջև, որի ամենացայտուն դրսևորումը 2016թ. հուլիսի 15-ի ռազմական հեղաշրջման անհաջող փորձն էր,
- հաճախակիացած ահաբեկչական գործողությունները,
- Թուրքիայի ներգրավումը մերձավորարևելյան, մասնավորապես՝ սիրիական ճգնաժամում,
- Արևմուտքի հետ հարաբերությունների վատթարացումը և դրա հետևանքով առաջացած տնտեսական անկումը,
- նախագահ Էրդողանի՝ սահմանադրական փոփոխությունների միջոցով իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու ավտորիտար նկրտումները,

- 2016թ. հուլիսյան հեղաշրջման փորձից հետո երկրում ծայր առած քաղաքական բռնաճնշումները՝ պետական պաշտոնյաների, ուժային կառույցների աշխատակիցների, ընդդիմադիր քաղաքական գործիչների[3], լրագրողների ձերբակալություններն ու բանտարկությունները, ընդդիմադիր «Զաման» պարբերականի փակումը:

Բացի վերոնշյալ հանգամանքներից, պատմությանը հայտնի է, որ թուրքական իշխանությունները սովորություն ունեն օգտագործել միջազգային անկայուն իրավիճակներն ազգային և կրոնական փոքրամասնությունների հետ հաշվեհարդար տեսնելու համար: Դրա լավագույն օրինակը Հայոց ցեղասպանության իրագործումն էր Առաջին աշխարհամարտի տարիներին: Ներկայում էլ, եթե վերոհիշյալ գործոնների ազդեցությամբ Թուրքիայում և տարածաշրջանում ստեղծվի անկայուն իրավիճակ, չի բացառվում, որ թուրքական իշխանություններն առիթը բաց չեն թողնի հերթական անգամ հաշվեհարդար տեսնելու իրենց կողմից անբարեհույս համարվող հայկական տարրի հետ:

Հպանցիկ նշենք, որ, բացի ավանդական հայ համայնքից, Թուրքիայում են գտնվում նաև մեծ քանակությամբ աշխատանքային միգրանտներ Հայաստանի Հանրապետությունից, որոնք չունեն այդ երկրի քաղաքացիություն և որոնց կեցությունն այդ երկրում հաճախ անօրինական է: Անկայուն իրավիճակի առաջացման պարագայում հայության այս շերտը նույնպես կարող է դառնալ թուրքական իշխանությունների և ոչ իշխանական հետադեմ տարրերի բռնության և ցասման թիրախ, ինչի մասին սպառնալիք արդեն իսկ պաշտոնական մակարդակով հնչել է դեռևս 2010թ. Թուրքիայի այն ժամանակվա վարչապետ, ներկայում նախագահ Ռեջեփ Էրդողանի կողմից:

Ֆորսմաժորային իրավիճակներից բխող՝ Լիբանանի, Իրանի և Թուրքիայի հայ համայնքներին հասցվելիք հարվածի դեպքում վերջիններս կամ ամբողջությամբ կկազմալուծվեն, կամ այնքան կթուլանան, որ նրանց գոյությունը կկրի գրեթե խորհրդանշական բնույթ, ինչպես, օրի-

[3] Մասնավորապես, հիշատակելի է քրդամետ Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության համանախագահներ Սալահեդդին Դեմիրթաշի, Ֆիգեն Յուքսեքդաղի և 9 ակտիվ գործիչների (Միլի մեջլիսի պատգամավորներ) ձերբակալությունը:

նակ, Եգիպտոսի հայ համայնքի պարագայում, որը, նախկինում լինելով հայկական սփյուռքի ծաղկուն համայնքներից մեկը, 20-րդ դարի կեսերից աստիճանաբար թուլացավ՝ կորցնելով իր երբեմնի դերը։

Մերձավոր և Միջին Արևելքի հայկական սփյուռքի գլխավոր համայնքներին հասցվելիք հնարավոր հարվածը և դրա հետևանքով վերջիններիս կազմալուծումն ընդհանրապես կարող են կասկածի տակ դնել այդ տարածաշրջանում հայկական սփյուռքի գոյությունը։ Իսկ դա ծանր հարված կլինի նաև ողջ Սփյուռքի համար, քանի որ, նախ՝ այդ տարածաշրջանի հայ համայնքներն են հանդիսանում արևմտահայ քաղաքակրթության (քաղաքակրթական կոդի կամ գենի) անմիջական կրողները[4], և, բացի այդ, դրանք հանդիսանում են սփյուռքաստեղծ համայնքներ[5], քանի որ ներկայում Սփյուռքի շատ առաջնորդներ (համազգային կառույցների ղեկավարներ, խմբագիրներ և այլն) դուրս են եկել այդ տարածաշրջանից, այդ տարածաշրջանում են ժամանակին ստեղծվել Սփյուռքի համազգային շատ կազմակերպություններ[6], ներկայում էլ շատ համազգային կառույցներ գտնվում են այնտեղ[7]։

Ցավոք, ստեղծված իրավիճակում դժվար է քիչ թե շատ արդյունավետ դեղատոմս առաջարկել Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների փրկության համար։ Մինչ օրս կիրառվել են այնպիսի ավանդական քայլեր, ինչպիսիք են.

- հայ համայնքների տղամարդկանցից զինված խմբերի կազմավորումը և հայկական թաղերի պաշտպանությունը նրանց հանձնելը (ինչպես լիբանանյան քաղաքացիական պատերազմի, այնպես էլ սիրիական ճգնաժամի ժամանակ),
- շտապ օգնության և վերականգնումի մարմնի գործունեությունը,

[4] Հետևաբար, նրանց կազմալուծումը մեծ կորուստ կլինի արևմտահայ քաղաքակրթության շարունակականության ապահովման տեսանկյունից։

[5] Տե՛ս, օրինակ, Ատանալեան Գ., Սուրիոյ միջազգային տագնապը եւ սուրիահայութեան հերոսական պայքարը, Գանձասար, Փետրուար Բ, 2017, էջ 8-9։

[6] ՀԲԸՄ-ն (1906թ.), Համազգային հայ կրթական և մշակութային միությունը (1928թ.) և այլն։

[7] Որպես այդպիսի ամենանշանավոր կառույց կարելի է վկայակոչել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը։ Առանձնակի հիշատակման արժանի է նաև Սփյուռքի միակ բուհը՝ Բեյրութի Հայկազյան համալսարանը։

- Հայրենիքից և Սփյուռքի այլ համայնքներից ու համազգային կազմակերպություններից տրամադրված նյութական օժանդակությունը՝ սնունդ, հագուստ, դեղորայք և այլն։

Ավանդական այս եղանակները, կարևոր լինելով հանդերձ, այնուամենայնիվ, միայն մասնակիորեն են կարողացել փրկել իրավիճակը՝ ընդհանուր առմամբ ի զորու չլինելով կանխել համայնքների եթե ոչ կազմալուծումը, ապա էական թուլացումը։

Առանձնապես մեծ հույսեր չպետք է կապել նաև միջազգային խաղաղապահ առաքելությունների կազմում հայկական զինուժի ներգրավման հետ, քանի որ՝ ա) դրանք տեղակայված են ոչ բոլոր հայաշատ երկրներում (այսօր միայն Լիբանանում կան հայկական խաղաղապահ ուժեր), բ) նրանց անմիջական գործառույթների մեջ չի մտնում հայ համայնքների պաշտպանությունը։ Հայկական խաղաղապահ ուժերի ներկայությունը լավագույն դեպքում կարող է հոգեբանական նշանակություն ունենալ հայ համայնքների համար։

Հիշյալ հանգամանքներում լավագույնը, ինչ կարող են անել Հայաստանն ու Սփյուռքը, ճգնաժամային իրավիճակներում հայտնված հայության բեկորներին դեպի Հայաստան արագ և անվտանգ ուղղորդումն է՝ Արամ Ա կաթողիկոսի «Եթե գաղթ, ապա միայն Հայաստան» ձևակերպման տրամաբանությանը համապատասխան։ Այլ կերպ ասած՝ հայրենադարձություն, ինչը ենթադրում է փոխկապակցված քայլերի հաջորդականություն՝ ճգնաժամային իրավիճակների կանխատեսումից մինչև հայրենադարձների ինտեգրացիա հայաստանյան հասարակության մեջ։

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 23.03.2017թ.
Թիվ 3 (82), 2017թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի տպարանում